

ԽԻՆԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՎԱՆԴ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ






НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ХИКАР БАРСЕГЯН

ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА
В ПОБЕДУ ВЕЛИКОЙ
ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Издательство «Гитутюн» НАН РА
ЕРЕВАН 1995

947.925 1944/1945




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԻԿԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՎԱՆԴԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

A II
83824



Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր
Կ. Ա. Հարությունյան

Քարտեղյան Խ. Հ.

Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում: Պատ. խմբ. Կ. Ա. Հարությունյան: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ.— Եր., «Գիտություն» հրատ., 1995.—76 էջ.

Գրքովում, որը նվիրված է գերմանական ֆաշիզմի ջախջախման 50-ամյակին, ցույց է տրված Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության տարած պատմական հաղթանակում հայ ժողովրդի ներդրած ավանդը՝ հայ ռազմիկների սխրանքները, թիկունքի աշխատավորների և սփյուռքահայերի հայրենանվեր գործերը, ռազմաճակատային հայ մամուլի գործունեությունը:

Ռ 0503020600
703 (02) 95

ԳՄԴ 63. 3 (22) 721

ISBN 5—8079—1031—1

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 1995

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

1995 թ . մայիսի 9-ին լրացավ գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամյակը: Դա պատմական խոշոր իրադարձություն է մեր մոլորակի ժողովուրդների կյանքում, մեծ տոն: Մարդկության հոծ երթը, ինչպես ամեն տարի, այդ օրերին ձգվեց դեպի նախկին մարտադաշտերի կանաչ տարածություններում բարձրացած հայտնի և անհայտ զինվորների եղբայրական գերեզմանների հուշակոթողները, քաղաքներում, գյուղերում և նախկին մարտադաշտերում դրված հուշարձանները, որոնց վրա բոցկլտում է հաավերժական կրակը: Ամենուրեք հնչեցին մեծ հաղթանակի ղողանջները, տեղի ունեցան հանդիսավոր արարողություններ, որտեղ պատշաճն տրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի և Հայրենական մեծ պատերազմի և՛ զոհերին, և՛ ողջերին, վետերաններին, հակահիտլերյան դաշնության ռազմիկներին, բոլոր նրանց, ովքեր արյան գնով ջախջախել են գերմանական ֆաշիզմը և աշխարհը փրկել դարչնագույն ժանտախտից: Իսկ դա 1418 երկար ու ձիգ օրեր ու գիշերներ էին, վառողի հոտով հագեցված մահասարսուռ տարիներ: Գարնանային, ամառային, աշնանային բոլոր օրերը մարդկանց հիշողության մեջ մնացել են որպես երկար ու երկար ձմեռային օրեր, տխուր, մռայլ, սովի, սրտի, թշվառության և մահաբեր օրեր: Այդպիսին էր Երկրորդ աշխարհամարտը, այդպիսին էր մեծ Հայրենականը: Երկիրը ոտքի էր ելել մահ կամ ազատություն կարգախոսով:

Գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում վճռական և ծանրակշիռ դերը պատկանում է Խորհրդային Միությանը: Պատերազմում նա ապահովեց մեծ հաղթանակը ի շահ իր ազատության և հզորության, ընդարձակեց տեղութային ծովային և օվկիանոսային ազդեցության ոլորտը, ամենակարճ ժամանակամիջոցում վերականգնեց երկրի ավերված տնտեսությունը, բուժեց նրան հասցված վերքերը, ստեղծեց ինքնուրույն տնտեսական հզոր համակարգ, սեփական, հայրենական միջուկային զենք, որը խուճապ առաջացրեց Արևմուտքի երկրներում:

Մայիսի 9-ը համաժողովրդական տոնի օր է: Տոն է և՛ Հայոց աշխարհում: Հայ ժողովուրդը, որ նշանակալից ավանդ է ներդրել Հայրենական պատերազմում հաղթանակի կոփման գործում, հարգանքի տուրք է մատուցում քաջակորով իր զավակներին, մեծ Հայրենականին մասնակից ողջերին և զոհվածներին, հպարտանում նրանց անմահ սխրագործություններով: Երախտագետ մարդիկ երբեք չեն մոռանալ պատերազմում իրենց կյանքը զոհաբերած, տանջված, երիտասարդությունը խրամատներում թողած խիզախ մարտիկներին: Ժողովուրդը փառք է շնչում նահատակների շիրիմներին և գոչում՝ ներեցե՛ք մեզ, հայրե՛ր, մայրե՛ր, քույրե՛ր, եղբայրե՛ր, դուք, որ ձեր նվիրական կյանքը զոհաբերեցիք հանուն Հայրենիքի, հանուն մեր ազատության և գոյատևման, երբեք չեք մոռացվի:

ՊԱՏՆՐԱԶՄ...

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն մեջ լինում են այնպիսի օրհասական պահեր, երբ ստեղծված ուղեմաքաղաքական հանգամանքների բերումով վճռվում է նրա բախտը՝ լինել-չլինելու հարցը: Խորհրդային Միության ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի կյանքում այդպիսի ծանր ու ճակատագրական պահ էր հրկրորդ աշխարհամարտը, որի անբաժան մասն է կազմում 1941—1945 թթ. պատերազմը: Այն պատմության մեջ է մտել և կոչվում է ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏՆՐԱԶՄ: Այո՛, դա այդպես է՝ Հայրենական մեծ պատերազմ, քանզի այն ժամանակ կար միասնական մի մեծ Հայրենիք, և նրա բոլոր ազգերն ու ժողովուրդները անթիվ թելերով կապված էին միմյանց: Դա Խորհրդային Միությունն էր, որ գոյություն ունեցավ շուրջ 70 տարի: Դա մեր պատմությունն է, մեր կենսագրությունը, որից երբեք չի կարելի հրաժարվել, և դա հնարավոր էլ չէ: Իսկ ինչու՞ հրաժարվել: Անցյալը մոռացող ազգերը դատապարտված են մահվան:

1945-ի անմոռաց մայիսին հիտլերյան Գերմանիայի ջախջախմամբ եվրոպայում ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը: Գլխովին ոչնչացվեց գերմանական ֆաշիզմը: Մեր սուրբ պատվով դրեցինք պատյան: Երկրորդ համաշխարհային պատերազմի հղրափակիչ ակորդը իմպերիալիստական Ճապոնիայի պարտությունն էր, նրա անվերապահ կապիտուլյացիան 1945 թ. սեպտեմբերի 2-ին: Այսպիսով, վերացվեց ագրեսիայի օջախը նաև Հեռավոր արևելքում:

Գերմանական ֆաշիզմի դեմ տարած պատմական մեծ հաղթանակում վճռական դերը ամենից առաջ, ինչպես նշել ենք, պատկանում է հորհրդային Միությանը, ռուս ժողովրդին: Երկրորդ աշխարհամարտում որոշվում էր ոչ միայն հորհրդային Միության, այլև աշխարհի քաղաքակրթության բախտը: Գերմանական ֆաշիզմը նպատակադրվել էր ոչնչացնել ոչ միայն սոցիալիզմը, այլև առաջին հերթին հորհրդային Միությունը, որը մեծ տերություն էր, Ռուսաստանը, ԽՍՀՄ-ի կազմում գտնվող հանրապետությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմը երկուստեք էր. այն հիտլերյան Գերմանիայի կողմից զավթողական էր, թալանչիական, հորհրդային Միության կողմից՝ ազատագրական, ժողովրդական, հայրենական:

Գոտեմարտը ծանր էր: Սև ծովից մինչև Սպիտակ ծովը ձգվող վիթխարի ռազմաճակատը օր ու գիշեր շնչում էր վառողի ու արյան դաժան հոտը: Ֆաշիստական Գերմանիան հորհրդային Միության դեմ ակտիվորեն պատրաստվել էր կռվի, Եվրոպայում շուրջ եռամյա պատերազմի (թեկուզ հեշտ) փորձ ունեն, զինել էր 7 միլիոն 300 հազար մարդ: ԽՍՀՄ-ի դեմ միանգամից հանել էր 190 դիվիզիա, հինգ և կես միլիոն զինավառ ուժ, 1800 տանկ, 472 հազար հրանոթ, ականանետ, 4930 մարտական ինքնաթիռ, 190 մարտական նավ: Այս ամենը շարժվում էր երեք ստրատեգիական ուղղությամբ՝ Հյուսիս, Կենտրոն, Հարավ, այն է՝ Լենինգրադի, Մոսկվայի և Կիևի ուղղություններով*:

Ֆաշիստական դարչնագույն հեղեղն առաջ էր սողում՝ հրի ու սրի մատնելով շեն քաղաքներն ու գյուղերը՝ Մերձ-Բալթիկան, Ուկրաինան, Բելոռուսիան, Ղրիմը, Ռուսաստանի

* Այս և մյուս բոլոր փաստերը բաղել ենք մեծ Հայրենականին նվիրված գրականությունից, վավերագրերի ժողովածուներից, պատմապատկերական արխիվներից, մամուլից: Գրականության մատենագիտությունը տե՛ս «Հայրենական մեծ պատերազմի պատմության մատենագիտություն» (Եր., 1990), մեր առաջաբանով և խմբագրությամբ, «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945)» փոստաթղթերի և նյութերի ժողովածուն և այլն:

եվրոպական տարածքները, Հյուսիսային Կովկասը... Պատերազմի առաջին տարում այդ տարածքները գրեթե ավերվեցին: Մեր ուժերը քիչ էին: Թշնամու դեմ ունեինք 170 դիվիզիա, 2 բրիգադ, շուրջ երկու և կես միլիոն զինված ուժ, 37,5 հազար հրանոթ, ականանետ, 1475 տանկ, 1540 մարտական ինքնաթիռ: Թշնամին առանձին հատվածներում երեքից չորս անգամ ավելի ուժ ու տեխնիկա ուներ: Կարմիր բանակը, հարկադրված նահանջելով, պաշտպանական ակտիվ մարտերում հարյուր հազարավոր զոհեր տվեց: Ճշմարտությանը պահանջում է ասել, որ մեր կորուստներն անհամեմատ ավելի քիչ կլինեին, եթե երկրի պաշտպանությունը ժամանակին ճիշտ կազմակերպվեր (տակավին չէր ավարտվել սահմանների ռազմաստրատեգիական, պաշտպանական ամրությունների կառուցումը), 1937-ին բանակի բարձրաստիճան հրամկազմը չգլխատվեր, արտաքին քաղաքականության ասպարեզում ձկունություն և հեռահար քաղաքականություն իրականացվեր, և թույլ չտրվեին կոպիտ սխալներ, ռազմական տեխնիկան կատարելագործվեր և էլի այլ հանգամանքներ:

Հաղթանակ: Այո՛, այն ձեռք է բերվել մեծագույն զոհաբերությունների և ողբերգությունների գնով: Հնում ասում էին՝ հաղթողներին չեն դատում: Հաղթանակ, թեկու՛ղև մեծ կորուստների գնով... Դրա համար պահանջվեցին (1418 երկար ու ձիգ օրեր ու գիշերներ: Թշնամու ոտքերի տակ այրվում էր հողը: Պատերազմ էլ կա, պատերազմ էլ: Երկրորդ աշխարհամարտը ուրիշ էր: Այն տևեց վեց տարի (1939--1945 թթ.), մղվում էր 61 պետությունների տարածքում, ընդգրկել էր երկրագնդի բնակչության 80 տոկոսը: Երկու ռազմական դաշնությունների կողմից գործել են 110 միլիոն մարդ: Պատերազմի բոցերում զոհվել են ավելի քան 70 միլիոն մարդ, որից 20 միլիոնը խորհրդային Միության քաղաքացիներ են*: (Այս թվերը գրականության մեջ հակասական են— ի. Բ.):

* Գրականության մեջ խորհրդային Միության մարդկային կորուստները նշվում են նաև 35 միլիոն, որը, մեր կարծիքով, չափազանցություն է:

Պատերազմի ամբողջ ծախսերն ու ավերածությունները կադմուսն են շորս տրիլիոն դոլլար: Բայց կորուստներից մեծագույնը այն բյուրավոր երիտասարդների կյանքերն էին, որ մեկընդմիշտ լռեցին պատերազմի դաժան օրերնքով:

Այսպիսին է մարդկության պատմության մեջ մղված պատերազմներից ամենադաժանի ու կործանարարի՝ Երկրորդ աշխարհամարտի սարսափելի դեմքը:

Ֆաշիզմի դեմ հակահիտլերյան դաշնության՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Անգլիայի տարած համաշխարհային պատմական մեծ հաղթանակում, նորից ընդգծենք, ծանրակշիռ և վնասակա ավանդ են ներդրել Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները, ամենից առաջ ռուս ժողովուրդը: Ահա թե ինչու ընդմիշտ անմոռաց է, սիրով և ակնածանքով է հիշվում 1945 թվականի մայիսի 9-ը՝ Հաղթանակի օրը, և այն ամեն տարի նշվում է որպես ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՆ: Պատերազմի հաղթանակի անմահ սխրանքի գլխավոր հերոսը զինվորն էր, Մարդը: Երբեք չի խամրի ո՛չ այդ սխրանքի և ո՛չ էլ սխրագործողների փառքը, որքան էլ փորձեն նսեմացնել այն: Աշխարհն արդեն ճանաչում է այդ Հաղթանակը: Դրա առհավատչյան 50-ամյակի մեծ տոնակատարությունն է:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՄ ՄԱՀ...

Հայրենական մեծ պատերազմը և՛ պատմություն է, և՛ արդիականություն: Անանց են նրա դասերը: Այո՛, պատմություն է: Իսկ պատմությունը նորից չի գրվում և ոչ է՛լ կարելի է այն ջնջել: Պատմությունը մարդկության հիշողությունն է... Իսկ հիշողությունը ընտանեկան սուրբ պարտականություն է, ազգային արժանապատվության հավատամբ: Հիշողությունը, ինչպես և աղնվությունը, մայրական կաթի միջով անցնում է զավակներին: Պատմություն է՝ ավագ սերնդի՝ հայրերի մարտական-հերոսական կենսագրություն:

Արդիականություն է, քանի որ նրա դասերը ուսանելի են սերունդների համար: Սերունդների միջև հոգևոր կապի խզում չպիտի լինի:

Պատերազմի դաժան ճանապարհներով անցավ ղինվորը՝ «Հաղթանակ կա՛մ մահ» կարգախոսը շուրթերին: Ռազմաճակատն ու թիկունքը միասնական էին, անսասան: Տառապանքներն ու ողբերգությունները, հաղթանակի հրապույրը նրանք նույնպես վայելում էին միասնաբար:

Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ի. Վ. Ստալինը 1941-ի հուլիսի 3-ի պատմական ելույթում ցույց տվեց, որ 1941-ի հունիսի 22-ից Երկրորդ համաշխարհային պատերազմի բնույթը արմատապես փոխվում է, ֆաշիզմի համար այն մնում է թալանչիական բնույթի, համաշխարհային կայսրության հաստատման ձգտում, խորհրդային Միության ժողովուրդների համար հայրենական պատերազմ է, իսկ հակահիտլերյան դաշնության համար՝ ազատագրական պատերազմ, համաշխարհային քաղաքականությունը ֆաշիստական ժանտախտից փրկելու... գոտեմարտ:

1941-ի հունիսի 22-ի բռթաբեր կիրակի օրվա լուսաբացից մինչև 1945-ի ավետաբեր Մայիսի 9-ը ժողովուրդը մարտնչում էր «ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» նշանաբանով: Մարտերն անհավասար էին... Եղան օրհասական պահեր, երբ թշնամին բախեց Մոսկվայի դարպասները, օդակեց կենդանիները, հասնելով Ստալինգրադ, փորձեց ոստնել և քայլել դեպի Ուրալ, ճեղքելով հարավային ռազմաճակատը՝ հասավ Կովկասյան լեռների ստորոտները, փորձեց ցատկել և խցկվել Անդրկովկաս... Բայց հանդիպեց ուժեղ դիմադրության:

Ստալինգրադյան ճակատամարտերում մեր ռազմիկների հասցրած մահացու հարվածների շնորհիվ ֆաշիստական զորքերը մեծ պարտություն կրեցին, կոտրվեց ֆաշիզմի ողնաշարը: Պատերազմը մտավ նոր փուլ:

Մեծ Հայրենականը, սովորաբար, պարբերացվում է երեք գլխավոր փուլերի: Եվ դա հիմնականում ճիշտ է: Առանց մանրամասնելու նշենք, որ առաջին փուլը 1941 թ. հունիսի 22-ից մինչև 1942 թ. նոյեմբերի 18-ն է՝ տառապալից, հոգեմաշ պարտությունների և ողբերգությունների մի շարան: Գրանք ահեղ օրեր էին, օրեր, երբ գլխավերևում անպատիժ

պատում էին «Մեսսերները», երբ փրկություն չկար թշնամու արկերից, Արևելք սլացող տանկերից, թիկունք սողոսկած էսէսական ավտոմատավորների փոթորկալից կրակահերթերից։ Այդ մահասփյուռ դանթեական դժոխքում, վաքսանալիայի Սոդոմ-Գոմորում, ճակատագրով խաչվածներս բռնել էինք մեր խաչի ճանապարհը։ Դա բարու և չարի գոտեմարտ էր, որի բոցերում մեր զինվորները անհնարինը հնարավոր դարձրին... Առաջին փուլը միաժամանակ նշանավորվեց հիտլերյան զորքերի առաջին պարտությունամբ՝ Մոսկվայի մատուցյներում (այո՛, պարտությամբ), կայծակնային հաղթանակի պլանների ձախողմամբ։

Սա է պատմական ճշմարտությունը։

Երկրորդ փուլը-1942 թ. նոյեմբերի 19-ից մինչև 1943 թ. վերջը։ Արմատական շրջադարձ Հայրենական մեծ պատերազմի պատմության մեջ, ստալինգրադյան ճակատամարտը։

Երրորդ փուլը-1944 թ. հունվարից մինչև 1945 թ. Մայիսի 9-ը ֆաշիստական բլոկի ջախջախումը, Եվրոպայի ազատագրումը, ֆաշիստական Գերմանիայի լիակատար կործանումը։ Պատերազմի եզրափակիչ ակորդը, ինչպես գրել ենք, Ճապոնիայի լիակատար ջախջախումն էր՝ 1945 թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը։

Սեծ Հայրենականում հերոսությունը դարձավ զանգվածային։ Դրա վկայությունն այն է, որ 11603 ռազմիկներ արժանացել են Սովետական Միության հերոսի բարձր կոչման։ Նրանք շուրջ 100 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ են։ Ստեղծվեց ականավոր զորապետերի, ռազմական արվեստի փայլուն գիտականների մի համաստեղություն՝ մարշալ Գ. Կ. Ժուկովի գլխավորությամբ։ Ցավոք, ներկայումս քիչ են հիշվում նրանք, իսկ մարշալ Չուլկովի, Կոնևի և այլոց անունները Գերմանիայի վերամիավորումից հետո ջնջվել են Բեռլինի պատվավոր քաղաքացիների ցուցակից։ Բեռլինի պատվավոր քաղաքացու կոչում է շնորհվել Միխայիլ Գորբաչովին... (Օ՛, ժամանակներ, օ՛, բարքեր...)

1947 թ. նոյեմբերի 1-ի պաշտոնական տվյալներով

պատերազմի տարիներին պարզևատրվել են 9284199 մարդ, այդ թվում՝ ռուսներ՝ 6172976, ուկրաինացիներ՝ 1710766, բելոռուսներ՝ 311105, հայեր՝ 66802, վրացիներ՝ 49106, ադրբեջանցիներ՝ 36180, ուզբեկներ՝ 80013, ղազախներ՝ 96638, կիրգիզներ՝ 15449, կարելներ՝ 7890, լիտվացիներ՝ 6133, էստոնացիներ՝ 11489, տաջիկներ՝ 13997, թուրքմեններ՝ 14923, լատվիացիներ՝ 11133, հրեաներ՝ 160772, մորդվիններ՝ 57320, բաշկիրներ՝ 29900, օսեր՝ 12730, ուղմուրդներ՝ 12229, չովաշներ՝ 53566, մարիներ՝ 18253, թաթարներ՝ 174886 և այլ ազգեր՝ 133693: Թեև Հայաստանը ազգաբնակչության թվաքանակով Միութենական հանրապետությունների կազմում փոքր էր, բայց պաշտոնական տվյալներով 1943 թ. ռուսներից, ուկրաինացիներից ու բելոռուսներից հետո ավիացիայի սպայական կազմում և հրետանու բարձր ու ավագ հրամանատարությունում չորրորդ տեղում հայերն էին:

Ավիացիոն զորամասերում այդ ժամանակ կար 1200 հայ հրամանատար: Նույն պատկերն էր ներկայացնում կառավարական շքանշաններով պարգևատրվողների կազմը: Գրեթե նույնն էր կարմիր բանակի հայ գեներալների, հերոսների, փառքի շքանշանի լրիվ ասպետների զբաղեցրած տեղը ընդհանուր համակարգում: Դա ամենից առաջ հայոց մտաուժի ռազմական արվեստի ու ռազմավարության բարձր մակարդակի առհավատչյան էր:

Տասնամյակներ շարունակ անխղճորեն կեղծվում և խեղաթյուրվում է մեծ Հայրենականի իսկական պատմությունը, հրուշեհից մինչ Բրեժնև և ապա՝ Գորբաչով սեփականաշնորհվում է զինվորների արյան գնով նվաճված հաղթանակի դափնեպսակը: Պատմագիտությունը մեծ պարտք ունի ժողովուրդների առջև: Ասպարեզը, չգիտես ինչու, մնացել է վոլկոզոտվներին, սամսոնովներին, սոկոլովներին՝ և նմանատիպ այլ կեղծարարների, որոնք աղավաղում են պատմությունը, երիտասարդության մտքերը թունավորում, ազգամիջյան թշնամանք հրահրում: 1993-ին շուրջ 200 մամուլ ծավալով Մոսկվայում լույս է տեսել Բորիս Սոկոլովի «Հաղթանակի գինը. Մեծ Հայրենականը. Անհայտը

հայտնիի մասին» խորհրդավոր վերնագրով գիրքը: Դրանում փորձ է արվում նսեմացնել և՛ մեծ Հայրենականը, և՛ հաղթողներին:

Զու՛ր հույսեր: Թո՛ղ հայտնի լինի բոլոր նրանց, ում պետք է. ստի ոտքերը կարճ են, և ապա որքան հեռանում ենք մեծ Հաղթանակի պատմական օրերից, 1945-ի մայիսից, այնքան ավելի է իմաստավորվում մեծ Հայրենականի պատմությունը, Մայիսի 9-ի նշանակությունը, այնքան վեր է խոյանում ժողովրդի անմահ սխրանքը, բարձրանում ողջերի պատասխանատվությունը զոհվածների և սերունդների առջև... այնքան պարտավորեցնող է «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի» նշանաբանը:

Հայ ժողովուրդը դա լավ գիտի:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ՎՐԵԺԻ Է ԿՈՉՈՒՄ

Այո՛, հայ ժողովուրդը լավ գիտի մեծ Հաղթանակի գինը: Նա չի մոռացել, որ երբ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց պատերազմը, առաջին իսկ օրից նա իր մարտական տեղը գրավեց հակահիտլերյան ուժերի շարքերում, դարձավ նրա ակտիվ մասնակիցը: 1941 թ. հունիսի 28-ին «Պրավդա» թերթը գրել է. «Մոբիլիզացիոն կետերից մեկը ներկայացավ բանվոր Գալուստ Կարազյուզյանը՝ Կարագյուզովը»:

— Իմ երկու եղբայրները արդեն մարտնչում են թշնամու դեմ, — ասաց նա: Այսօր ռազմաճակատ եմ մեկնում և ե՛ս իմ մյուս չորս եղբայրների հետ...

Յոթ եղբայրներ մի ընտանիքից դարձան Հայրենիքի գինավոր: Նրանք սրբազան երգում տվեցին՝ մարտերում երբեք չհրեբալ, մարտնչել մինչև թշնամու լիակատար ոչնչացումը:

Այդ նույն օրերին Հայաստան աշխարհում, Լոռու Հագվի գյուղում, 70 -ամյա Անուշ Անանյանը ռազմաճակատ ուղարկեց իր տասը տղաներին և հինգ թոռներին: Այսպիսին էր ռազմաճակատայինների մայր Անուշը: Չեղոք մնալու տարբերակ չկար: Զէ՞ որ դարեր շարունակ հայ ժողովուրդը իր ճակատագիրը կապել էր ուս ժողովրդի հետ և գտնվում էր մի

միասնական պետական համակարգում: Հայաստանը պետք է լիներ և եղավ Ռուսաստանի հետ: Իրենց ջահելությունը խրամատներում թողած պատերազմի վետերանները միանգամայն արգարացի են, երբ ասում են՝ «մենք որ չկո՞վեինք, ո՞չ Հայաստանը կլիներ և ոչ էլ՝ անկախություն»: Ահա թե ինչու հայ ժողովուրդը այն օրհասական օրերին ոտքի հանեց իր զավակներին և ուղարկեց ի մարտ: Նրանք բոլորն էլ ուսաների, ուկրաինացիների, բելոռուսների և մյուս ժողովուրդների զավակների հետ միասին դարձան Հայրենիքի զինվորներ: Տունդարձի ճանապարհը Բեռլինի վրայով էր... Մի՞թե կարելի է մոռանալ 1942-ի փետրվարի 27-ին «Պրավդայում» հրապարակված հայ ժողովրդի նամակ-պատվիրանը՝ ռազմաճակատում մարտնչող իր զավակներին: Այն ստորագրել էին 335.010 մարդ, այսինքն՝ հանրապետության ողջ շափահաս բնակչությունը: Նամակում ասված էր՝ «Հայրենի հողը վրեժի է կոչում ձեզ... վրեժ, վրեժ, վրեժ և՛ անցյալում՝ հայկական եղեռնի տարիներին, և՛ այժմ թափված յուրաքանչյուր կաթիլ արյան համար: Արյան դիմաց՝ արյուն, մահվան դիմաց՝ մահ»:

Հայ ժողովուրդը գիտեր, որ Հայրենիք հասկացությունը լայն ու համապարփակ նշանակություն ուներ: Այն ձգվում էր Արաքսի ափերից մինչև Հյուսիս, Սև ծովից մինչև խաղաղականի ափերը: Թեև հրանոթները որոտում էին Հայաստանից հեռու, բայց հայրենի հողը՝ Հայաստան աշխարհը, վտանգված էր: Այո՛, Հայաստանի տարածքներում պատերազմական գործողություններ չեն ծավալվել, բայց առաջին իսկ օրերից Թուրքիայի կառավարող շրջանների թշնամական քաղաքականության հետևանքով Հայաստանի ու Վրաստանի Արևմտյան սահմաններում բացառիկ լարված դրություն էր ստեղծված և ամեն ժամ հղի էր պատերազմի հրդեհի ծագմամբ: Հայաստանի կառավարությունը, պատերազմի առաջին իսկ օրերից հաշվի առնելով այդ վտանգը, իր առջև երկու գլխավոր խնդիր էր դրել, առաջին՝ համակողմանի օգնություն ցույց տալ գործող բանակի ռազմիկներին, և երկրորդ՝ հան-

րապետութիւնը դարձնել ռազմատնտեսական հզոր ամրոց: Չպետք է մոռանալ, որ Թուրքիան 1942-ի ամռանը Հայաստանի սահմանագլխին կուտակել էր 26 (որոշ աղբյուրներով 29) մարտական դիվիզիա, ժանիքները սրած՝ սպասում էր, թե ինչ կլք կունենա ստալինգրադյան ճակատամարտը: Տակավին պատերազմի նախօրյակին, 1941-ի հունիսի 18-ին, Գերմանիայի և Թուրքիայի միջև ստորագրվել էր բարեկամության և չհարձակվելու մասին պայմանագիր, որով Գերմանիան ամրապնդել էր իր արեւելյան ռազմաճակատի աջ թևը և իրական վտանգ ստեղծել Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի համար: Իսկ Թուրքիայի դաշնակիցը ֆաշիստական Գերմանիան էր: Հիտլերականների հաջողութեան դեպքում Թուրքիան հարձակվելու էր Հայաստանի վրա՝ պանթուրքիզմի ծրագիրը՝ «Մեծ Թուրան» ստեղծելու գաղափարը իրականացնելու համար: Ահա թե ինչու կենաց ու մահի պայքարի ելավ ամբողջ հայ ժողովուրդը՝ կողքին զորավիգ ունենալով աշխարհասփյուռ հայութեանը: Նա լավ գիտեր, թե իր հետ ինչ է բերում դաժան պատերազմը: Նրա սրտում դեռ թարմ էր և չէր մարել հայերի մեծ ցեղասպանութեան արյունածոր և չսպիացող վերքերի այրոցքացավը, որ բացվել էր իր մեկուկես միլիոն զավակների եղբրական կորուստներով:

Այժմ էլ այն թարմ է: Վկա՝ ցեղասպանութեան 80-ամյակի նշումը այս օրերին: Մինչև արդարութիւնը չհաղթանակի, աշխարհը չգատապարտի, իսկ Թուրքիան էլ, ինչպես գերմանացիները ընդունեցին հրեաների նկատմամբ ֆաշիստների գործած շարագործութիւնները, չընդունի սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի ու նրանց հաջորդների կողմից կազմակերպած հայերի ցեղասպանութիւնը, հայ ժողովուրդը չի լռի: Նա չի մոռանա իր միլիոնավոր զավակների կորուստը, չի հրաժարվի Հայ դատից՝ պահանջատիրութիւնից:

Հայ ժողովուրդը գիտեր նաև, որ ֆաշիզմի հաղթանակով հարցականի տակ էր դրվում իր բնօրրանի գոյութիւնը: Չէ՛


որ Հիտլերն էր ասել՝ «ի վերջո ո՞վ է հիշում հայերի ոչըն-
շացման մասին»¹, իսկ նրա նախորդը՝ կայսեր Վիլհելմ II-ը,
ցինիկաբար հայտարարել էր՝ «հարկավոր է հայերին լիովին
բնաջնջել և միայն թանգարանային մի նմուշ պահել»:
Արյունարբու Թալեաթ փաշան էլ 1916-ին հոխորտացել էր՝
«Հայկական հարցը գոյություն չունի, վասնզի հայ չկա»:

Պատմական երևույթների գնահատման չափանիշը գի-
տականությունն է ու պատմականությունը: Կիրքը վատ խոր-
հրդատու է: Նրանք, ովքեր անխոհեմաբար ասում են՝
չգնայիք կովի, երբեկիցե մտածե՞լ են, թե ֆաշիստները դավ-
թած տարածքներում ինչպես են կոտորել տեղաբնակ հայե-
րին, քշել Գերմանիայի խորքերը՝ ստրկական աշխատանքի,
մահվան ճամբարներում ոչնչացրել, գիտե՞ն, թե՞ Պյատի-
գորսկում քանի հարյուր հայ են կենդանի-կենդանի թաղել...

Անցել է 50 տարի, բայց իմ հիշողությունից երբեք չի
ջնջվում 1943-ի սեպտեմբերին Կրասնոդարի երկրամասի
Շահումյանի շրջանի «Պոլիտոտղել» հայկական կոլտնտեսու-
թյունում տեսածս մղձավանջը: 89-րդ Հայկական հրաձգային
դիվիզիայի ռազմիկներս նոր էինք գյուղն ազատագրել ֆա-
շիստներից: Հիտլերականները այրել ու մոխիր էին դարձրել
բոլոր տները, ծեղերին ու երեխաներին կոտորել, իսկ աշ-
խատունակ տղամարդկանց և կանանց քշել Գերմանիայի
խորքերը՝ ստրկական աշխատանքի: Ռազմի դաշտերում,
հայաբնակ վայրերում ամենուրեք նույն տեսարաններն էին,
լսվում էր հայերի ճիչն ու հառաչանքը: Ահա թե ինչ էր
բերում ֆաշիզմը: Հայ զինվորը տեսնում էր այս ամենը և
ցասումով լցվում, վրեժ լուծում թե՛ անցյալի և թե՛ ներկայի
համար: Հայ զինվորը փայփայում էր նաև այն հույսը, թե
պատերազմի հաղթանակից հետո կվերագարձվեն Առաջին հա-
մաշխարհային պատերազմի և նրան հաջորդած տարիներին
Մայր հայրենիքից զավթած տարածքները: Նման հույսեր էին

K. B. Bardakjian, Hitler and the Armenian Genocide. Cam-
bridge, Massachusetts, Zoryan institute. Special Report, 1985, 81 p.

A 83824



փայփայում և՛ աշխարհասփյուռ հայերը, և՛ հայ եկեղեցու Մայր Աթոռը՝ ս. էջմիածինը։ Դրա վկայությունն է այն, որ պատերազմը ոտքի հանեց սփյուռքահայությունը, ծավալվեց հայրենասիրական շարժում՝ «Սասունցի Դավիթ», «Գինեբալ Բաղրամյան» տանկային շարասյուների կառուցման համար միջոցների հավաքումը, դաշնակիցների զորքերում ֆաշիզմի դեմ հայ զինվորների կռվելը։

Կարմիր բանակի զրահատանկային զորամասերի հրամանատարի օգնական գեներալ-լեյտենանտ Կորոբկովը 1944 թ. ապրիլի 4-ին ս. էջմիածին արքեպիսկոպոս Գեորգ Զորբելյանին հղած հեռագրում հաղորդել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը փետրվարի 23-ին ռազմաճակատում գործող N-զորամասին հանձնելու մասին, շնորհակալություն հայտնել և միաժամանակ նշել, որ խորհրդային զինվորները երգվել են «Սասունցի Դավիթ» տանկերով անողորբաբար ոչնչացնել գերմանական զավթիչներին։ Սփյուռքահայերին շնորհակալություն է հայտնել նաև զրահատանկային զորքերի մարշալ Ֆեոդորենկոն։ Նա նշել է, որ «Սասունցի Դավիթ» 2-րդ տանկային շարասյունը, որ ստեղծվել է սփյուռքահայերի զրամական միջոցներով, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Կիրիլենկոյի հրամանատարությամբ, ռազմաճակատում հրաշքներ է գործում։ 1944 թ. հունիսի 7-ին Պաշտպանության պետական կոմիտեի նախագահը շնորհակալություն է հայտնել սփյուռքահայերին՝ «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյան ստեղծման համար հատկացրած զրամական միջոցների համար։

Ճաշիզմը ջախջախվեց։ Պատերազմի ավարտից հետո Պոտսդամի (Բեռլին) կոնֆերանսում հայկական հողային պահանջատիրության հարցը թեև շոշափվեց, բայց լուծում չստացավ. ԱՄՆ-ը ու Անգլիան չպաշտպանեցին։ Մեծ տերությունները Մայր Հայաստանից զավթած տարածքները վերադարձնելու որոշում կայացնելու փոխարեն հայրենադարձություն խոստացան։ Այս էր հայ ռազմիկների առատորեն թափած արյան զինը։ Իսկ պատերազմին անմիջական մասնակցություն է ունեցել շուրջ 600 հազար հայ։

Հայ ժողովուրդը ի բնե խաղաղ ժողովուրդ է, ստեղծարար և շինարար: Նա պատերազմի թշնամի է: Այդ է պատճառը, որ երբ 1941-ի հունիսին սկսվեց Հայրենական պատերազմը, հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Շիրազը հնչեցրեց իր բոցաշունչ «էքսպրոմտի» տողերը, որն արտահայտում էր այս անգամ արդեն մարտնչող Հայաստանի տրամադրությունը:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցի՛ք վայրագ:
Մենք ձեռք դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացի՛ք վայրագ:
Բայց մենք հավե՛րժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչե՛ք վայրագ:

ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՋԱԿՈՐՈՎ ԶԱՎԱԿՆԵՐԸ

1941—1945 թթ. պատերազմում տարած պատմական հաղթանակում անուրանալի է հայ ժողովրդի նշանակալից ավանդը: Հայ ժողովրդի զավակները ամենուր էին՝ ցամաքում, ծովում, օդում, այնտեղ, ուր ահեղ ճակատամարտեր էին մղվում, ուր զգացվում էր նրա մտաուժի կարիքը: Պատերազմի առաջին իսկ օրերից հայ ռազմիկներն աչքի ընկան բոլոր ռազմաճակատներում՝ Բալթիկայում, Կովկասյան ու Կարպատյան լեռներում, Բրեստի ամրոցի պաշտպանության հերոսամարտերում, Օդեսայի և Սևաստոպոլի ծովային ճակատամարտերում, Մոսկվայի մատույցներում, Լենինգրադի ու Ստալինգրադի պատերի տակ, Նովոռոսիյսկի մոտ, Կերչում, «Մալալա ղեմլայում», Օրյոլ-Կուրսկի աղեղում, Դնեպրի վրա մղած վիթխարի կռիվներում: Զի հղել ռազմաճակատի որևէ հատված, հերոս քաղաք, ուր մարտնչած չլինեն հայ ռազմիկները՝ զինվորներն ու սպաները: 1941-ին Դրեստի մոտ համառ մարտեր էր մղում գնդապետ, հետագայում գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Ասքանաշ Կարապետյանի մոտոմեքենայացված գունդը, Լվովի պաշտ-

պանութեան համար մղած մարտերում աչքի ընկալ գեներալ Աշոտ Սարգսյանի հրամանատարութեամբ գործող դիվիզիան: 1941-ի նոյեմբերին Մոսկվայի տակ մղված ճակատամարտում գեներալ Հայկ Մարտիրոսյանի հրամանատարութեամբ հերոսական էջեր գրեց 239-րդ Սիբիրյան մոտոհրաձգային դիվիզիան: Հայկական զենքի, ռազմական գիտութեան փառքը հնչեցրել են մարշալներ Հովհաննես Բաղրամյանը, Համազասպ Բաբաջանյանը, Խորհրդային Միութեան նավատորմի ծովակալ, ակադեմիկոս Հովհաննես Իսակովը, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփեյրյանցը (Սերգեյ Խուդյակով), գիտնականներ գեներալ-գնդապետներ Լևոն Օրբելին, Արտյոմ Միկոյանը: Հայտնի են Սարգիս Մարտիրոսյանի, Քրիստափոր Ալավերդյանի, Նվեր Սաֆարյանի, Սիմոն Զաքիյանի, Արտաշես Վասիլյանի, Երվանդ Կարապետյանի, Իսահակ Գասպարյանի, Բագրատ Միտոյանի, Նիկոլայ Հովհաննիսյանի, Դրիգոր Բուլբուլյանի, Սուրեն Թովմասյանի, Պերճ Բոշնաղյանի, Սերգեյ Կարապետյանի, Հրանտ Սիմոնյանի, Միքայել Մուրադյանի և այլոց անունները, որոնք, հմտորեն տիրապետելով ռազմական արվեստին, գլխավորել են զորամիավորումների և ստորաբաժանումների մարտական գործողութունները, բարձրացրել զինվորների բարոյաքաղաքական ոգին, ոչնչացրել թշնամուն: Անմահ սխրագործություններ են կատարել Խորհրդային Միութեան կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, Խորհրդային Միութեան հերոսներ Հունան Ավետիսյանը, Սամսոն Մկրտումյանը, Սերգեյ Բուռնաղյանը, Ղուկաս Մադոյանը, Հրանտ Բաբայանը, Աշոտ Ղազարյանը, Աշոտ Ամատունին, Լիպարիտ Իսրայելյանը, Գեղեոն Միքայելյանը, Ռուբեն Հակոբյանը, Սուրեն Առաքելյանը, Սուրեն Սարգսյանը և ուրիշներ:

Ուշագրավ է այն փաստը, որ մեծ Հայրենականում առավել աչքի ընկած հայորդիներից ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը, կապիտան Գարեգին Բալայանը, լեյտենանտ Սերգեյ Օգանովը, կապիտան Հրանտ Օհանյանցը և լեյտե-

նանտ վահան Ակոպովը պաշտպանության նախարարի հրամանով առհասարակ գրանցված են N. զորամասերի անձնակազմերի ցուցակներում: Նրանց անունները ոսկե տառերով փորագրված են ղինված ուժերի Մոսկվայի կենտրոնական թանգարանի հաղթանակի սրահի մարմարե սյուներին: Հայ ժողովրդի զավակներն աչքի են ընկել նաև Մանջուրիայում ճապոնական կվանտունյան բանակի ջախջախման գործում: Ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը այդ ժամանակ Անդրբայկալյան ռազմաճակատի՝ 12-րդ օդային բանակի հրամանատարն էր: Խորհրդային Միության հերոս գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը հեռավորարեւելյան 2-րդ ռազմաճակատի հրետանու պետն էր: Նույն ռազմաճակատում 10-րդ օդային բանակի թիկունքային ծառայությունը ղեկավարում էր ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տումաջևը: Գեներալներ Անդրանիկ Ղազարյանը, Կոստանդին Լազարևը, Առաքել Օգանեզովը (գնդապետ) հրաձգային դիվիզիաների, իսկ գվարդիայի գեներալ-մայոր Տիմոֆեյ Դեդեօղլյանը հեծելազորային դիվիզիայի հրամանատարներ էին: Ծանր ականանետների բրիգադի հրամանատար փոխգնդապետ Սամվել Հարությունյանը, որ մինչ այդ բարի համբավ էր վայելում իր մարտական սխրանքներով, ավելի բազմապատկեց այն: Ամուրի գետանցման և նոր բնագծեր գրավելու, թշնամու ամրությունները ոչնչացնելու համար ծավալված կռիվներում փայլուն հաջողությունների հասան հարյուրավոր հայ ռազմիկներ:

Պատերազմի ընթացքում 70 հազար հայ ռազմիկներ պարգևատրվել են կառավարական շքանշաններով և մեդալներով, 103-ին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում, 27-ը Փառք շքանշանի լրիվ ասպետներ են: Շուրջ 60 հայ ռազմիկների շնորհվել է գեներալի կոչում: Մեծ թվով հայ հայրենասերներ խիզախաբար մարտնչել են պարտիզանական ջոկատներում, Ֆրանսիայի դիմադրական շարժման շարքերում, ինչպես նաև Բալկանյան երկրների դիմադրական շարժման ջոկատներում, համալենտրոնացման ճամբարների

ընդհատակյա կազմակերպություններում: Թշնամու թիկունքում՝ Ուկրաինայում և Բելոռուսիայում, պարտիզանական միավորումներում կռվել են երկու հազար, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ հինգ հարյուր, Մերձքալթիկայի, Լենինգրադի և Կալինինի մարզերում երկու հարյուր, Ֆրանսիայում՝ հազար երկու հարյուր հայորդիներ: Հուլիսի 1-ին Կովպակի լեգենդար միավորման կազմում գործել են Սերգեյ Հարությունյանի, Նաումովի միավորումում՝ Արամայիս Հովսեփյանի ջոկատները, Ֆրանսիայում՝ Ալեքսանդր Ղազարյանի ղեկավարած պարտիզանական գունդը: Հայտնի են Սմբատ Արզումանյանի, Հակոբ Իլիկչյանի, Արտյոմ Պետրոսյանի, Արթուր Բաբայանի, Արամայիս Նավոյանի, Դևոթ Բուդոյանի, Մկրտիչ Դաշտոյանի, Հայկ և Թամարա Մարտիրոսյանների և այլոց անունները:

Երկրորդ աշխարհամարտում խիզախաբար կռվել են սփյուռքահայ զինվորները: Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են 18 հազար հայեր: Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը արժանացել է Միացյալ Նահանգների հերոսի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի: Ֆրանսիայի և Անգլիայի բանակներում գործել են շուրջ 30 հազար հայ զինվորներ և հրամանատարներ: Անմահ սխրանք է գործել դրոշ, հասարակական գործիչ Միսաք Մանուշյանը, որը արժանացել է Ֆրանսիայի ազգային հերոսի կոչման (հետմահու): Իրենց կյանքը 2-րդ աշխարհամարտում հանուն քաղաքակրթության փրկության զոհաբերել են Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները: Ավելի քան 300 հայորդիներ զոհվել են Հունաստանի պարտիզանական կռիվներում: Բուլղարիայում անմոռաց անուն է վաստակել քաջարի պարտիզանուհի Հերմինե Ռազդրադլյանը (Սաշկա), որին ֆաշիստները տանջամահ արեցին և սպանեցին: Վառնայում գնդակահարվել և ծովն են նետվել Կարապետ Խաչատրյանը, Հակոբ Պարոնյանը, Հարություն Պողոսյանը և ուրիշներ: Պատերազմի տարիներին ավելի սերտացան Հայրենիք-Սփյուռք կապերը: Ռազմաճակատում արիաբար են մարտնչել և՛ հայ

կանայք, նրանք կանացի քնքշությամբ կապել են վիրավոր զինվորների վերքերը, բուժել նրանց: Հայ կինը տիրամայր է, Հայրենիքը պատկերվում է մոր կերպարով: Գլուխ՝ ենթ խոնարհում հայ կնոջ առջև և մեծարում նրան: Երիցս փառք հայ կնոջը՝ մեր ազգապահպանության և գոյատևման հավերժական աղբյուրին: Բարի անուն են վաստակել եֆրեյտոր Սոնյա Սինոյանը, զենիթային մարտկոցի հեռաշափային ջուրհատի հրամանատար Հասմիկ Թամազյանը, կրտսեր լեյտենանտ էմմա Հայրապետյանը, բուժաշխատողներ Գոհար Նազարյանը, Գոհար Հարությունյանը, Ասյա Հարությունյանը, Հայկանուշ Ասատրյանը, Ելիզավետա Հովհաննիսյանը, բժշկական ծառայության լեյտենանտներ Օֆելյա Պետրոսյանը, Սոֆյա և Ռոզա Լալայանները, բժշկական ծառայության մայոր Ռոզա Զանջուտովան և շատ ուրիշներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ամեն մի պատերազմ, որ շարիք ու աղետ է, բամում է ժողովրդի կենսական հյուսթերը: Այդպես էր և Հայրենական մեծ պատերազմը: Ժամանակի թելադրանքով երկրում ինտերնացիոնալ զորամասերին զուգահեռ կազմակերպվեցին ազգային դիվիզիաներ: Անդրկովկասյան հանրապետություններում ձևավորվեց ազգային 19 դիվիզիա, որից 12-ը մարտնչել են ռազմաճակատներում: Հայ ժողովրդի ծաղիկը մոբիլիզացվեց բանակ: Կազմավորվեցին 89-րդ, 408-րդ, 409-րդ Հայկական դիվիզիաները և այլ զորամասերը: Մինչ այդ գործում էր 76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան, որ կազմավորվել էր 1920—1922 թթ. Առաջին Հանրապետության ազգային բանակի հիմքի վրա: Պատերազմի առաջին օրերից այն մարտական առաջադրանք է կատարում Իրանում, այնուհետև փոխադրվեց ռազմաճակատ, գեներալ Ն. Տ. Թավարքիշիձեի հրամանատարությամբ. աչքի ընկավ Ստալինգրադյան դյուցազնամարտերում: 1942-ի նոյեմբերին վերակազմավորվեց 51-րդ գվարդիական դիվիզիայի:

Ղրիմում գնդապետ Սիմոն Զաքիյանի հրամանատարությամբ գործում էր 390-րդ դիվիզիան: Իսկ 261-րդ դիվիզիան, որ ձևավորվել էր 1942-ին (հրամանատար գնդապետ Ն. Փ. Բալոյան), Հայաստանում պատերազմի ամբողջ ընթացքում աշալուրջ պաշտպանում էր պետական սահմանը թուրքական ներխուժման վտանգից և թարմ ուժեր ուղարկում ռազմաճակատ: Խորհրդային Միության վրա ֆաշիստական Գերմանիայի հանկարծակի հարձակումը վտանգի տակ դրեց մեր ժողովուրդների ազատությունը և անկախությունը: Նրկորոգ համաշխարհային պատերազմի ամբողջ ծանրությունը փոխադրվեց խորհրդա-գերմանական ռազմաճակատ, հենց այստեղ էր որոշվում ոչ միայն Խորհրդային Միության ժողովուրդների, նաև համաշխարհային քաղաքակրթության բախտը: Բայց երբ գործը արդեն հասել էր պատերազմին, կյանքի թելադրանքով ամեն ինչ պետք է ենթարկվեր պատերազմում հաղթանակի ապահովման շահերին: Պատերազմը բոլոր տնտեսական ու կազմակերպչական ուժերի փորձություն էր:

Խորհրդային Միության Գերագույն խորհրդի 1941 թ. հունիսի 22-ի հրամանագրով բանակ կանչվեցին 1905—1918 թթ. ծնված զինապարտները: Հետագայում նոր հրամանագրով զորակոչվեցին նաև ավելի մեծահասակները՝ 1890—1904 թթ., իսկ ավելի ուշ փոքրահասակները՝ 1919—1925 թթ. ծնվածները: Բացի Հայկական ազգային դիվիզիաներից ու ստորաբաժանումներից հարյուրավոր հայ ռազմիկներ են մարտնչել 31-րդ, 61-րդ, 336-րդ հրաձգային դիվիզիաներում, 28-րդ և 38-րդ պահեստի բրիգադներում և այլ զորամասերում: Կարմիր բանակի հայկական առաջին ազգային դիվիզիան, որի կազմավորումն ավարտվել է 1922 թ. սեպտեմբերի 5-ին, նրեանում դարձավ հայոց նորագույն շրջանի ռազմավարական դպրոց: Մեծ Հայքեանականի տարիներին իր դրոշը բարձր ծածանեց, Ստալինգրադյան հերոսամարտում արժանացավ զվարդիական կոչման:

Մարտական պանծալի ուղի անցան հայկական 408, 409-րդ դիվիզիաները: 409-րդը գնդապետ Արտաշես Վասիլ-

յանի հրամանատարութեամբ ձեռավորվեց 1941-ի օգոստոսին, Ստեփանավան քաղաքում, 1942-ի դեկտեմբերին մեկնեց ռազմաճակատ։ Այդ ժամանակ նրա անձնակազմում կար 13837 ռազմիկ, որից հայեր էին 13413-ը։ Դիվիզիան աչքի է ընկել Դոնի Ռոստովի մարզի տարածքներում ծավալված կռիվներում, Դնեպրի անցման, Ուկրաինայի ազատագրական մարտերում։ Նրան շնորհվել է 409-րդ Կիրովոգրադյան և Բրատսկավյան կոշում։ 409-րդը ակտիվ մասնակցություն է ունեցել Զեխոսլովակիայի ազատագրությանը։ Մարտերը շարունակվել են Ավստրիայում, Հունգարիայում։ 1945-ի հուլիսին դիվիզիան կազմալուծվել է։

408-րդ հայկական դիվիզիան, որ ձեռավորվել է 1941-ի օգոստոսին, գնդապետ Պ. Ն. Կիցուկի հրամանատարութեամբ ռազմաճակատ է մեկնել 1942-ի սեպտեմբերին։ Այդ ժամանակ նրա կազմում կար 11463 ռազմիկ, որից 11125-ը հայեր էին։ 408-րդը ակտիվ մասնակցություն է ունեցել Կովկասի պաշտպանությանը։ Կազմավորվել է 1942 թ. սեպտեմբերին։

1942-ին Ղրիմում դաժան մարտերում գնդապետ Սիմոն Զաքիյանի հրամանատարութեամբ 390-րդ հայկական դիվիզիան աչքի ընկավ իր խիզախութեամբ։ Դիվիզիայի կոմիսսարն էր Թորգոմ Շահինյանը, քաղբաժնի պետը՝ Սուրեն Թովմասյանը։ Անհավասար մարտերում մեծ կորուստներ ունեցավ 309-րդը, որ կազմացրվեց 1942 թ. հունիսին։ Ռազմաճակատին անընդմեջ համալրում է ուղարկել 261-րդ հրաձգային դիվիզիան, որը տեղաբաշխված էր Հայաստանում։ 1941-ի դեկտեմբերի հաշվարկներով դիվիզիայի կազմում կար 8981 մարդ, որից հայեր՝ 6632, ռուսներ՝ 1339։ Դիվիզիան մեծ թվով զինվորներ է ուղարկել Ստալինգրադյան ռազմաճակատ։

... Ստալինգրադյան ճակատամարտում խորհրդային զորքերի տարած հաղթանակը արմատական շրջադարձ եղավ Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության մեջ։ Այն ապահովեց մեր զորքերի հետագա մարտական զործողությունների հաջողությունները, պատմական տասը հարվածների շեշտակիությունը, գերմանաֆաշիստական հորդանների

գլխավորին ջախջախումը, Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիան: Ստալինգրադյան ճակատամարտում տարած հաղթանակը կրկնակի բախտորոշ էր հայ ժողովրդի կյանքում: Ահա թե ինչու: Տակավին 1943-ի մարտի 5-ին թուրքական «Գորշ գայլեր» նացիոնալիստական կազմակերպությունը իր պաշտոնական համանուն թերթում հրապարակել էր իր նվաճողական պլանները: «Ո՞վ ենք մենք: Մենք Գորշ գայլերն ենք՝ Բոզքուրդ: Ո՞րն է մեր գաղափարախոսությունը: Գորշ գայլերի թուրքիզմը: Ո՞րն է Գորշ գայլերու՝ թուրքերու հավատամբը: Անոնք կհավատան, որ թուրք ցեղը և թուրք ազգը ուրիշ ցեղերե կամ ազգերե ավելին գերիվեր են: Ո՞րն է նրանց գերազանցության աղբյուրը: Թուրքական արյունը: Արդյո՞ք թուրքը գերազանց է ծնունդով: Այո՛, թուրքը գերազանց է ծնունդով... Գորշ գայլերը պանթուրքիստ են: Այո՛, Գորշ գայլեր թուրքերու նպատակն է տեսնել թուրքական պետություն՝ 65 միլիոն ազգ մը ըլլալը: Խո՛ն պիտի լինի քո արդարացումը ասոր համար: Գորշ գայլերը երկար ատեն ի վեր հռչակել են՝ «Արդարությունը չի տրվի, այլ կբռնագրավվի» սկզբունքը: Պատերազմ: Այո՛, պատերազմ, եթե հարկավոր է» (քաղվածքը բերում ենք ըստ Գերսամ Ահարոնյանի «Խոհեր 50-ամյակի ավարտին: 1915—1965» գրքի, Բեյրութ, 1966, էջ 177):

Գործը այնտեղ էր հասել, որ քեմալական գրող դիվանագետ Կարա Օսման օղլին 1942-ին Ստամբուլում կըշտամբում էր հիտլերյան դեսպան Ֆոն Պապենին՝ ասելով, թե Գերմանիան թերագնահատել է ազգային գործոնը, նա պետք է ուղադրությունը կենտրոնացնի իր Խորհրդային Միության ազգերի մեջ հակառուսական տրամադրությունների սերմանելու և հակառուսական ելույթներ հրահրելու վրա¹:

Այո՛, Ստալինգրադյան ճակատամարտը, որը տևեց 200 օր, կրկնակի բախտորոշ էր հայերի համար: Ստալինգրադյան դյուցազնամարտերին մասնակցում էին Հայաստանից

¹ Տե՛ս Я. К. Караосман огли. Дипломат поневоле, М. с. 196.

ռազմաճակատ մեկնած Հայկական 76-րդ (հետագայում՝ 51-րդ գվարդիական), 136-րդ և 138-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմում կային մեծ թվով հայեր: 76-րդը մարտերում ցուցաբերած սխրանքների համար արժանացավ գվարդիական կոչման և պարգևատրվեց լենինի շքանշանով: Ստալինգրադյան ճակատամարտում ինտերնացիոնալ զորամիավորումներում մարտնչող հազարավոր հայ ռազմիկները ևս աչքի ընկան իրենց սխրանքներով: Անսալով հայ ժողովրդի պատմական նամակ-նակազի պատվիրաններին, նրանք քաջ գիտակցում էին, որ հայ ժողովրդի բախտը որոշվում է Ստալինգրադում: Այդտեղ էին գեներալ լեյտենանտ Ս. Գալաշևը (Դոնի ռազմաճակատի քաղվարչության պետ), Հ. Թումանյանը (5-րդ տանկային բանակի ռազմախորհրդի անդամ), գեներալ Ի. Վերիլովը՝ 1942-ի նոյեմբերյան հակահարձակման հրետանային զորքերի ընդհանուր հրամանատար, բրիգադի հրամանատար Ա. Կարապետյանը, գնդի հրամանատարներ Մ. Մադաթյանը, Ա. Բարսեղյանը, Գ. Միրզոյանը, օգաչուններ Սերգեյ Բուռնազյանը, Վլադիմիր Միկոյանը, գնդացրորդ Սուրեն Միրզոյանը, գրող, զինվորական ժուռնալիստ Հրաչյա Քոչարը, Բարդուղ Պետրոսյանը և հարյուրավոր հայ զինվորներ, հրամանատարներ: Ստալինգրադյան ճակատամարտում տարած հաղթանակով վերջնականապես թաղվեցին Թուրքիայի՝ Հայաստանի ու Կովկասի վրա զինված արշավանք կազմակերպելու և զավթելու գիշատիչ պլանները: Հիշենք նաև, որ Թուրքիայում ապրող հայերի վիճակը նույնպես ծանր էր, նրանք ենթարկվում էին ազգային անասելի հալածանքների: 1942-ին «Ունեցվածքի հարկի մասին» («Վայրը գվերգիսի») ընդունած օրենքով հայերի կողոպուտ էր կազմակերպված: Թուրքիայում ապրող հայերը, հույները, հրեաները պարտավոր էին տասնյակ անգամ ավելի գումար մուծել պետական դանձարան: Օրենքը խախտողները հալածվում էին, քշվում Անատոլիայի խորքերը տաժանակիր աշխատանքի: Ստալինգրադում գերմանական զորքերի կրած պարտությունը, պա-

տերադմում ստրատեգիական նախաձեռնությունը խորհրդային զորքերի ձեռքն անցնելը սթափեցրեցին Թուրքիայի կառավարող շրջաններին: 1944-ի օգոստոսին դաշնակիցների պահանջով Թուրքիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ: Թեև դա ձևական էր, բայց, այնուամենայնիվ, պատռվեց Թուրքիայի «չեզոքության» քողը, ուժը կորցրեց պատերազմի նախօրյակին: Կնքված գերմանա-թուրքական բարեկամության պայմանագիրը: ՄԱԿ-ում տեղ գրավելու համար 1945-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային: Դա ավելի շուտ սիմվոլիկ խորամանկ քայլ էր: Ետպատերազմյան ժամանակաշրջանի ամբողջ իրադարձությունները ցույց տվեցին Թուրքիայի կառավարող շրջանների երկերեսանիությունը: Թուրքիան նորից նետվեց Արևմտյան Գերմանիայի գիրկը, 1951-ին դարձավ ՆԱՏՕ-ի, այնուհետև ՍԵՆՏՕ-ի անդամ: Այս ամենը չպետք է մոռանալ: Չպետք է մոռանալ հայ ժողովրդի պատմական ճակատագրում ռուս ժողովրդի կատարած վճռորոշ և բարերար դերը: Հայ ժողովրդի ականավոր զավակները՝ հաշատուր Աբովյանից մինչև Միքայել Նալբանդյան, Հովհաննես Թումանյանից Ավետիք Իսահակյան և ուրիշներ հաշերի ռուսական կողմնորոշման մեծ ջատագովներ են եղել: —Հավերժ Ռուսաստանի հետ, — այսպես են պատգամել նրանք: Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, հռչակավոր գեղանկարիչ Մարտիրոս Սարյանին 1925-ին հղած նամակում գրել է. «Ռուսական մի կարմիր զինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե հազար Վիլսոն ու Աղգերի լիզա, հազար Մակդոնալդ ու Հերիո: Սա բացարձակ ճշմարտություն է» (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1979, էջ 199):

Վարպետի պատգամները այժմեական հնչեղություն ունեն:

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ անմոռաց էջեր են գրել Հայրենական մեծ պատերազմի տարիներին

ժամանակի թելադրանքով ստեղծված ղինվորական ռազմա-
ճակատային հայերեն թերթերն ու հանդեսները, թոուցիկներն
ու կոշերը: Ռազմաճակատային հայ մամուլը հայ ռազմիկ-
ների սխրագործությունների տարեգրությունն է, հայոց ռազ-
մավարության շտեմարանը: Այն միաժամանակ հայոց պար-
բերական մամուլի երկուհարյուրամյա պատմության շղթայի
անգնահատելի օղակն է, նորագույն շրջանի պատմության
վավերագրական աղբյուրը: Զինվորական մամուլը քաղաքա-
կան-գաղափարական հզոր ղենք էր ղինված ուժերի անձնա-
կաղմի ռազմաքաղաքական, բարոյահոգեբանական դաստիա-
րակության ասպարեզում:

Հայրենական պատերազմի տարիներին կարմիրբանա-
կային, ռազմաճակատային թերթերի միանվագ տպաքանակը
կաղմում էր 1,5 միլիոն օրինակ: Մինչև Հայրենական մեծ
պատերազմը կար հայերեն ղինվորական մեկ թերթ՝ «Կարմիր
ղինվորը», որը ուներ գրեթե 20-ամյա պատմություն: Անցած
տասնամյակներում «Կարմիր ղինվորում» աշխատել էին Հա-
յաստանի ղինված ուժերի քաղաքական նշանավոր աշխատող-
ներ, լրագրողներ, գրողներ, մտավորականներ: «Կարմիր
ղինվորը» խաղաղ ժամանակաշրջանի թերթ էր, հայոց ռազ-
մավարության, ռազմական արվեստի պրոպագանդիստ, հայ
ռազմիկների դաստիարակ:

Մեծ Հայրենականի առաջին իսկ ամիսներին ծնունդ
առավ ռազմաճակատային հայ մամուլը: 1941—1945-ին
հայերեն լույս է տեսել 16 անուն թերթ, որոնցից 10-ը ռազ-
մաճակատների, բանակների, ղինված ուժերի գլխավոր քաղ-
վարչության թերթերի ու հանդեսների հայերեն տարբերակ-
ներն էին՝ «Մարտական գրոհ», «Հայրենիքի փառքի համար»,
«Դեպի թշնամու ջախջախումը», «Սովորովական», «ԲԳԿԲ
մարտիկ», «Առաջ, հանուն հայրենիքի», «Սովետական ռազ-
միկ», «Առաջ, դեպի հաղթանակ» (Անդրկովկասյան ռազմա-
ճակատի, Սևծովյան ղորքերի խմբի օրգան), «Կարմիր բա-
նակի աղիտատորի բլոկնոտ», «Մարտական աստղ» (45-րդ
բանակի քաղվարչության օրգան): Մնացած 6-ը՝ «Հայկական
սնայակեր», «Կարմիր ղինվոր», «Հանուն հայրենիքի», «Մար-

տական դրոշ», «Մարտ հանուն հայրենիքի», «Մարտական կադրեր», Հայկական ազգային դիվիզիաների օրգաններն էին: Թերթերի նման բազմաքանակությունը պատերազմական ժամանակի հրամայականն էր, ռազմատեսական, քաղաքական, ազդեցիկոն-մասնայական միջխարի գործունեության արգասիք: Զորակոչված հայերի մի մասը ռուսերենին լավ չէր տիրապետում, տրված հրամանները, առաջադրանքները դժվարանում էր միանգամից ըմբռնել, ուստի հարկավոր էր մայրենի լեզվով մամուլ:

Ռազմաճակատային մամուլը, այդ թվում հայկականը ռուսեր մի գլխավոր խնդիր՝ ռազմիկներին ոգեշնչել թշնամուն ջախջախելու, հայրենիքը հիտլերյան ստրկացումից ազատագրելու, աշխարհի քաղաքակրթությունը ֆաշիզմից փրկելու առաքելության գաղափարով: Հայկական ռազմաճակատային մամուլը միաժամանակ քարոզում էր ազգային շահերից թխող պահանջներ, փառքի վահանին հանում հայ քաջակորուղ ռազմիկների սխրանքները, զինվորներին ու հրամանատարներին ոգևորում հայ ժողովրդի ազատագրական պայքարի դյուցազնական դրվագներով, հայ զորավարների, հերոսների, զինվորների մարտական գործողություններով:

Ռազմաճակատային հայ մամուլը և լրագրողները գործել են Սևաստոպոլի և Կերչի համար մղված ահեղ մարտերում («Մարտական գրոհ», «Հայկական սնայպեր», «Կարմիր զինվոր»), Դոնբասում և Դոնի տափաստաններում («Հայրենիքի փառքի համար»), Կովկասի պաշտպանության համար մղված մեծ ճակատամարտում («Առաջ, դեպի հաղթանակ», «Կարմիր զինվոր», «Հանճան հայրենիքի» «Առաջ, հանուն հայրենիքի», «ԲԳԿԲ մարտիկ» և այլն), միջին Ռուսաստանի տափաստաններում («Դեպի թշնամու ջախջախումը»), Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների պաշտպանության և ազատագրական դաժան կռիվներում («Սովետական ռազմիկ», «Սովետական», «Կարմիր բանակի ազդեցիկության բլոկնոս»): Թերթերի մի մասին բախտ միճակվեց լինել ազատագրական կռիվների դրոշակակիրների շարքում, մասնակցել

Բեռլինի ճակատամարտին, նկարագրել Ռայխստագի վրա հաղթանակի դրոշի բարձրացման պատմական պահը: Մոսկվայում հրատարակվող «Կարմիր բանակի ազիտատորի բլոկնոտը» (խմբագիր՝ գրող Հմայակ Սիրաս) պատերազմի բոլոր օրերին հայ ռազմիկներին էր հասցնում Մոսկվայի ձայնը, նրանց հորդորում սովորել թշնամուն հաղթելու գիտությունը, շնորհակալ հայրենիքի պատգամը՝ «Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ»:

Ռազմաճակատային թերթերն էլ զինվորի ճակատագիր ունեին, կոչում էին, հաղթում: Որքան էլ վտանգը մեծ լիներ, թերթը հրատարակվում էր: Ռազմաճակատային մամուլը առաջին հերթին պատկերել է զխավոր հերոսի՝ զինվորի կերպարը, ցույց է տվել տպագիր խոսքի ուժը: Զինվորական լրագրողները զենքով և գրչով կոչում էին թշնամու դեմ և միաժամանակ ստեղծում մեծ Հայրենականի պատմության անմոռաց էջերը, ճշմարտապատում տարեգրությունը, ռազմիկներին ոգեշնչում, նպաստում ռազմաճակատի և թիկունքի կապերի ամրապնդմանը: Ռազմաճակատային հայերեն առաջին թերթերից էր 1941—1942 թթ. Ղրիմի համար մղած դաժան կռիվներում ծնված «Մարտական գրոհը», որը Ղրիմի ռազմաճակատի քաղվարչության համանուն հայերեն թերթի տարբերակն էր: Խմբագիրն էր Արամայիս Մնացականյանը: Թերթը միանգամից ջերմորեն ընդունվեց հայ ռազմիկների կողմից: Այն դարձավ Ղրիմում մղած ողբերգություններով և սխրանքներով լի կռիվների տարեգրությունը: Տասնամյակների հեռավորությունից թերթի էջերը մեզ են հասցնում հայ ռազմիկների քաջագործությունները, «Մարտական գրոհի» աշխատակիցներ Ա. Մնացականյանի, Բ. Շահումյանի, Ա. Թադևոսյանի, Ս. Կուրտիկյանի, Մ. Մարտիկյանի, Ա. Աբրահամյանի, Վ. Պողոսյանի և այլոց հրապարակախոսությունը:

Անմոռաց են 390-րդ հայկական դիվիզիայի՝ «Հայկական սնայպեր» (խմբագիր՝ գրող Գուրգեն Հովնան), 408-րդ դիվիզիայի՝ «Հանուն հայրենիքի» (խմբագիր՝ Արշավիր Հակոբյան, այնուհետև՝ Սուրեն Գրիգորյան), «Մարտ հանուն հայ-

րենիքի» (խմբ.՝ Ե. Գրիգորյան), 89-րդ Թամանյան դիվիզիայի (խմբագիր՝ Գուրգեն Հարությունյան, այնուհետև՝ Սիմոն Նալբանդյան), «Առաջ, հանուն հայրենիքի» (խմբագիր՝ Արշավիր Հակոբյան, այնուհետև՝ Մովսես Գրիգորյան), 409-րդ Հայկական դիվիզիայի «Մարտական գրող» (խմբագիր՝ գրող Հարություն Մկրտչյան), «Հայրենիքի փառքի համար» (խմբագիր՝ Մովսես Գրիգորյան), «Դեպի թշնամու ջախջախումը» (խմբագիր՝ Վարդան Վարդանյան), «Մարտական աստղ» (խմբագիր՝ Գուրգեն Հովնան, այնուհետև՝ Խաչիկ Աբելյան), «Սովետական ռազմիկ» (խմբագիր՝ Գառնիկ Իսահակյան, այնուհետև՝ Վարդան Ղազանչյան), «ԲԳԿԲ մարտիկ» (խմբագիր՝ Ա. Մնացականյան), «Կազրերի համար» (խմբագիր՝ Ս. Ասրիկյան) թերթերի, նրանց աշխատակիցների, զինվորական լրագրողների մարտական ծառայությունները, նրանց ավանդը ֆաշիզմի ջախջախման գործում:

Մեծ Հայրենականում գրիչը հավասարակց սվինի: Շուրջ 500 հայ լրագրողներ, գրողներ մեկնեցին ռազմաճակատ: Նրանց մեջ էին Վախթանգ Անանյանը, Հրաչյա Քոչարը, Գուրգեն Բորյանը, Գարեգին Բեսը, Մելիք Քոչարյանը, Գրիգոր Սարգսյանը, Ալ. Մարտինը, Ավետիս Դեբենցը, Գրիգոր Զոհրաբյանը, Զավեն Մարգարյանը, Միկիտ Հակոբյանը, Անդրանիկ Աղաբեկյանը, Հրայր Հովակիմյանը, Արշալույս Սարոյանը, Գևորգ Հայրյանը, Ներսես Պողոսյանը, Մկրտիչ Մանուկյանը և ուրիշներ: Մարտադաշտում քաղաքական աշխատողները և լրագրողները գնդակների տարափների ու արկերի պայթյունների տակ, արհամարհելով մահը, հայրենանվեր գործ էին կատարում, հույս ու հավատ ներշնչում զինվորներին: Նրանք ավտոմեքենաների թափերում և խրամատներում թերթ էին հրատարակում... Բայց, ավա՜ղ, նրանցից ավելի քան 70-ը տուն չվերադարձան, զոհվեցին՝ Հանուն հայրենիքի կարգախոսը շուրթերին*:

* Ռազմաճակատային հայ մամուլի և լրագրողների մասին հրատարակության ենք պատրաստել մենագրություն: Տեղի սղության պատճառով հնարավոր չեղավ այստեղ ծավալվելու:

89-րդ հայկական Թամանյան եռակի շքանշանակիր ղիվիզիան, որ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ լեգենդար հռչակ վաստակեց, աղգային ղիվիզիաներից միակն էր, որ 3700 կմ ձգվող ռազմի ճանապարհներով Կովկասյան նախախուժներից, ծանր մարտեր մղելով, հասավ մինչև Բեռլին, մասնակցեց Ռայխստագի վրա հաղթանակի դրոշի բարձրացմանը: Ահա թե ինչու ենք առանձնացնում նրան: 1942-ի օգոստոսի 8-ին 89-րդ հայկական հրաձգային ղիվիզիան փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանի հրամանատարությամբ (Սիմոն Զաքիյանը փետրվարին տեղափոխվել էր Ղրիմի ռազմաճակատ, ապրիլին գրոհի ժամանակ անհավասար մարտում զոհվել) պաշտպանական դիրքեր գրավեց Գրոզնու մատույցներում, կասեցրեց Հարավային ռազմաճակատի զորքերի անկանոն նահանջը: Հենց այդ օրերին էր, որ գործողության մեջ դրվեց «Ոչ մի փայլ հեռ» մարտակոչը: Հայ ռազմիկները հինավուրց Թերեքի ափերին մարտական առաջին մկրտությունը ստացան, երես առ երես հանդիպեցին թշնամուն: Հեղվեց մեր ղինվորի արյան առաջին կաթիլը, որն ավելի բորբոքեց վրեժի ցասումը: Բոլորը, զրահ դարձած, մեկ մարդու պես պաշտպանում էին Կովկասի դարպասները, պատրաստվում հարձակողական մարտերի, իսկ թշնամին ձգտում էր, ինչ գնով էլ լինի, թափանցել Կովկաս, տիրանալ Բաքվի նավթին, երկրամասի հարստությանը: Այստեղից էլ սկսվում է 89-ի մարտական կենսագրությունը: Կովկասյան ճակատամարտի նախօրերին ստացվեց հայ ժողովրդի պատմական նամակը ռազմաճակատում մարտնչող իր զավակներին: Նրանում ժողովուրդը պատվիրել էր անողորմաբար ոչնչացնել ֆաշիստական զավթիչներին, շարունակ հիշել՝ ռազմաճակատի որ հատվածում էլ կռվելիս լինեք, կռվում եք հարադատ Հայաստանի գոյության, փրկության, ազատության համար... Հանուն Հայաստանի հարվածեցեք թշնամուն մինչև վերջին կաթիլ արյունը: Հիշեցեք մեր ժողովրդի իմաստուն խոսքերը՝ «Զգիտակցված

մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»։ (Սա Եղիշեի՝ Ավարսուրից եկող «Մահ իմացյալ անմահություն է» պատգամն էր - Խ. Բ.)։ Այդ ահեղ օրերին Կովկասը ոտքի ելավ ի մարտ. հիտլերականների ճանապարհը փակեցին ոչ թե լեռները, այլ մարդիկ, որոնք, մի միասնական բռնկմամբ, գոչում էին՝ Կովկասը չենք տա՝ թշնամուն։

Եվ շտապեցին...

Հայ ժողովրդի պատվիրանում ասված է՝ ձեր տունդարձի ճանապարհը Բեռլինի վրայով է։ Հայ ժողովրդի նամակ-պատգամին նամակ-երդումով պատասխանեցին 89-րդ դիվիզիայի ռազմիկները։ Այն ստորագրել էին 6689 մարդ։ Հրապարակված տեքստի տակ դրվել էր 29 ստորագրություն, այդ թվում՝ տղերքիս հեղինակինը. այն ժամանակ 400-րդ գնդի կոմերիտական բյուրոյի քարտուղարն էի։

1943-ի նոր տարվա առաջին օրը ամբողջ ռազմաճակատով մեկ սկսվեց հարձակումը։ Կոտրելով թշնամու դիմադրությունը՝ հայ ռազմիկները գրոհելով առաջ էին ընթանում, ազատագրում քաղաքներն ու գյուղերը։ Դիվիզիայի մարտական գործողությունների առաջին երկու շրջափուլը բնորոշվում է Կովկասի համար մղված պաշտպանական կռիվներով և ճակատամարտերով։ Դիվիզիան սկզբում գնդապետ Արտաշես Վասիլյանի (մինչև 1943-ի փետրվարի 10-ը), իսկ հետո գեներալ Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ ակտիվ մասնակցություն ունեցավ Թամանյան թերակղզու ազատագրման գործում, որի համար էլ վերանվանվեց և կոչվեց 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիա...։ Հաջորդ շրջափուլում հաջողությամբ կազմակերպելով ծովանցումը՝ ճեղքում է Կերչի ամրությունները, մասնակցում Ղրիմի ազատագրությանը։ Ակնառու հաջողությունների համար 89-րդ Թամանյանը 1944-ի ապրիլին պարգևատրվում է Կարմիր աստղի, իսկ մայիսի 24-ին՝ Կարմիր դրոշի շքանշաններով։ 390-րդ և 400-րդ գնդերին շնորհվում է Սևաստոպոլյան կոչում։ Սկսվում են 89-րդ դիվիզիայի մարտական գործողությունների 5-րդ և 6-րդ փուլերը՝ Լեհաստանի ազատագրման մարտերը և հետո՝ եզրափակիչ գրոհը՝ Բեռլինի ճակատա-

մարտը: 1944-ի սեպտեմբերից մինչև 1945-ի հունվարը նրանք գոտեմարտեր մղեցին Լեհաստանի տարածքներում՝ հանուն Ռուսակի Բրուդի, Կոշմին, Կոպինեց քաղաքների ազատագրման: Միայն 1945-ի հունվարի 17—19-ը թամանցիները, ոչնչացնելով թշնամու 6000-անոց խմբավորումը, լեհական Կոպինեց քաղաքի մոտ անցնում են գերմանական սահմանը և մարտերով հետապնդում նահանջող թշնամուն: Փետրվարի 16-ից մինչև ապրիլի 16-ը ծանր պայմաններում հայ ռազմիկները մասնակցել են Վիսլա-Օդեր ստրատեգիական պլանգրամի կռիվներին, պաշտպանել Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքից 3,5 կմ հարավ Օդեր գետի ձախափնյա հենակետը, որն ուներ 2,5 կմ երկարություն և 700—800մ խորություն: Այնուհետև դիվիզիան մասնակցել է Յշեցնով և Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքների գրավմանը, իսկ ապրիլի 20-ից մինչև մայիսի 2-ը փողոցային մարտեր է մղել Բեռլինում, ստիպել Հուլբուրգ Հայն ալգոմ գտնվող հզոր միջնաբերդ ամրոցի 6000-անոց կայազորին ղենքը ցած դնել: Հայ թամանցիները 1945-ի մայիսին ակտիվ մասնակցություն ունեցան Բեռլինի ճակատամարտի հաղթական ավարտին, Ռախստագի պատերին թողեցին իրենց ինքնագրերը՝ Երևան-Բեռլին, Ապարան-Բեռլին, Զանգեզուր-Բեռլին, Կիրովական-Բեռլին, Լենինական-Բեռլին. Բեռլինում նրանք պարեցին մեր ավանդական քոչարին: Մայիսի 28-ին դիվիզիան պարգևատրվեց Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով: Դա նրա երրորդ շքանշանն էր:

Հաղթանակ... Ի պատասխան հայ ժողովրդի նամակ-պատվիրանի, Բեռլինից գրած հաշվետվության մեջ թամանցիները նշել են. «Պատերազմի ընթացքում դիվիզիան ոչնչացրել է թշնամու 9000 զինվոր ու սպա, խփել ու ոչնչացրել է 148 տանկ ու ինքնագնաց հրանոթ, ավելի քան 300 դաշտային հրանոթ, 383 գնդացիր, 5600 հրացան ու ավտոմատ, 1160 ավտոմեքենա և այլն»:

Թամանցիների մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու, անձնական արիության ու սխրագործությունների համար գեներալ Նվեր Սաֆարյանի անունը լայն ճանա-

շում ստացավ: Գեներալի համար ամենաթանկը զինվորի կյանքն էր, ամեն ինչ անում էր քիչ կորուստներով հաջողության հասնել, հավասարապես սիրում էր բոլորին: Նա զինվորի իսկական հայր էր, սրտացավ, մարդկային: 89-րդ Հայկական դիվիզիան 1942-ին ռազմաճակատ է մեկնել 14437 մարդով: Պատերազմի ընթացքում ստացած համալրումներով 23200 մարդ է ծառայել դիվիզիայում: Շտաբի պաշտոնական տվյալներով զոհվել են 5728-ը, վիրավորվել 13725-ը, որից 9500-ը բուժվել և շարք են վերադարձել: Ընդհանուր անձնակազմից միայն 1577 մարդ (կամ 7,4%-ը) չի վիրավորվել կամ հիվանդացել: Բնորոշ է այն փաստը, որ դիվիզիայի կորուստների կեսը բաժին է ընկնում Կովկասի պաշտպանական մարտերին՝ 2600 մարդ: Այն ժամանակ Նվեր Սաֆարյանը տակավին մեր դիվիզիայում չէր: Կորուստների այդ մեծաքանակությունը առաջին հերթին արդյունք էր ռազմաճակատում սկզբնական շրջանում մարտավարման փորձի պակասի և 1943-ի փետրվարի 9—10-ը Կրասնոդարի երկրամասում՝ Նովի Զերիլովկայում և Պոդիում բարձրաստիճան հրամանատարության մեղքով տեղի ունեցած ողբերգության: Յավոք, դիվիզիայի պատմության այս «սպիտակ բծերը» տակավին լուսաբանված չեն. ո՞վ էր մեղավոր հարցի պատասխանը լիովին տրված չէ: Նովի Զերիլովկայի բնակիչները ավելի քան 1300 հայ ռազմիկների աճյունները հավաքել և եղբայրական մի գերեզմանում են ամփոփել, բարձրացրել հուշակոթող ու խնամքով պահպանում են այն: 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի պատմության մեջ անմոռաց էջեր են դրել դիվիզիայի հրամանատարներ գնդապետներ Սիմոն Զաքիյանը, Արտաշես Վասիլյանը, փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը, գեներալ Նվեր Սաֆարյանը, դիվիզիայի հրամանատարի տեղակալներ, գնդապետներ Բագրատ Դանիելյանը, Գրիգոր Բուլբուլյանը, Երվանդ Կարապետյանը, Ֆեոդոր Պոլտավեցը, հրամանատարներ և քաղաքական աշխատողներ Լիպարիտ Վարդանյանը, Գրիգոր Հակոբյանը, Երվանդ Դավիդովը, Սուրեն Բաղդասարյանը, Պերճ Բոշնաղյանը, Հրանտ Սիմոնյանը, Միքայել Մուրադյանը, Գրիգոր

Աբրահամյանը, Արշավիր Հակոբյանը, Սիմոն Նալբանդյանը, Գեորգի Տեր-Ղազարյանցը, Իվան Պեշկանսկին, Աշոտ Հարությունյանը, Պապիկ Ավալյանը, Գուրգեն Հարությունյանը, Խաչիկ Պայազատյանը, Արմենակ Խառատյանը, Ղևոնդ Թունյանը, Խորհրդային Միության հերոսներ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը, Զահան Կարախանյանը, Այդին Հարությունյանը, Սիմոն Բաղդասարյանը, Հարություն Մկրտչյանը, Վարդգես Ռոստոմյանը, Խորեն Խաչատրյանը, Հրանտ Բաբայանը, փառքի շքանշանի լրիվ ասպետներ Գենևան Ոսկանյանը, Իսահակ Կարախանյանը, Վարազդատ Կուլիկյանը, Աշոտ Մելքումյանը, Հովսեփ Հովսեփյանը, Սանասար Սևոյանը, Քերոս Սերոբյանը, Իսրայել Ստեփանյանը և շատ ու շատ ուրիշներ: Նրանց սխրագործությունների տարեգրությունը դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթն է: Նրանց մասին գրել և պատմել են իրենց աշխատություններում, հուշագրություններում պատերազմի վետերանները, պատմաբանները և զինվորական լրագրողները, հատկապես Ս. Նալբանդյանը, Ա. Սարոյանը, Ա. Հակոբյանը, Գ. Աբրահամյանը, Խ. Բարսեղյանը, Ա. Մնացականյանը, Գ. Ղարիբջանյանը, Ղ. Դալլաբյանը և ուրիշներ:

Այնուհանդերձ, պատերազմում քիչ անարդարություններ չեն եղել: Հենց այն հանգամանքը, որ 89-րդ հայկական Թամանյանը աղգային միակ դիվիզիան է, որ մտել է Բեռլին, բայց բեռլինյան չի կոչվել, իսկ նրա լեգենդար հրամանատարին հերոսի կոչում չի շնորհվել, դրա ապացույցն է: Չէ՞ որ նվեր Սաֆարյանը առնվազը երեք անգամ կարող էր այդ կոչմանն արժանանալ՝ Թամանի աղատագրման, Կերչի ու Սևաստոպոլի ամրությունների ճեղքման ու գրավման և Բեռլինի ճակատամարտում ցուցաբերած հմուտ ռազմավարության և անձնական խիզախության համար: Այս էլ է եղել:

Հայ թամանցիների սխրանքները անմահ են...

ԱՆՍԱՍԱՆ ԹԻԿՈՒՆՔԸ

Պատերազմի տարիներին անօրինակ սխրանքներ գործեցին թիկունքի աշխատավորները: Հայաստանը միանգամից

դարձավ մարտական ճամբար, ամբողջ աշխատանքը վերականգնվեց պատերազմի շահերին համապատասխան: Այդ օրերի կարգախոսն էր՝ ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար: Ստեղծվեցին աշխարհազորային և կործանիչ ջոկատներ ու գումարտակներ: Հովհաննես Շիրազից մինչև ավագանին՝ Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը, Մովսես Արազին, Դերենիկ Դեմիրճյանը, Նաիրի Զարյանը, Ստեփան Զորյանը դարձան աշխարհազորայիներ...

Արդյունաբերությունը փոխադրվեց ռազմական հիմքերի վրա: «Հավասարվել ռազմաճակատի գվարդիականներին», — այս էր օրվա հրամայականը: Հրացանն ու նռնակը հավասար տեղ գտան մուրճի ու զնդանի կողքին: Հայաստանը մարտնչում էր: Հայրենիքի պաշտպանության առաջամարտիկների շարքերում էին կոմունիստները: 1941—1943-ին Հայաստանի կոմկուսը, բացի զինվորական պարտադիր ծառայության ենթականերից, մի քանի անգամ կուսակցական մոբիլիզացիա կատարեց՝ ռազմաճակատ ուղարկելով իր արժանավոր զավակներին: Կոմունիստներին հետևեցին կոմերիտականները: Հայաստանի կոմերիտիությունը բանակ ուղարկեց ավելի քան 70 հազար անդամ, այդ թվում՝ 20 հազար կամավոր:

Նոր ուժով դրսևորվեց Հայաստանի բանվոր դասակարգի հայրենասիրությունը: Ալավերդու, Ղափանի հանքագործները, Երևանի Կիրովի անվան կառուչուկի, Կիրովականի Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատների քիմիագործները, Զերժինսկու անվան մեքենաշինական գործարանի, «Արարատ» տրեստի և այլ ձեռնարկությունների աշխատողները, երկաթուղայիները փառքով պսակեցին իրենց: Կառուչուկի կոմբինատը նվաճեց Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ Կարմիր դրոշը: Յուրաքանչյուր թիկունքայինի նշանաբանը դարձավ օրական 2—3 արտադրական նորմայի կատարումը:

Հայաստանը ռազմաճակատին տալիս էր ականանետներ, ավիառումբերի կորպուսներ, ականներ, ձեռքի և հակա-

տանկային նռնակներ, պաշտուցիկ նյութեր, ռազմական հանդերձանք: Հայաստանի արդյունաբերությունը իրացրեց և թողարկեց շուրջ 300 տեսակի արտադրանք: Լենինականի տեքստիլ կոմբինատը արտադրեց 110 մլն մետր գործվածք, որից 65 մլն-ը զինվորական հանդերձանքի համար: Կիրովականը տվեց 81 հազար կիսամուշտակ ու բաճկոն: Կարի ձեռնարկությունները կարմիր բանակի կարիքների համար թողարկեցին 5270 հազար զուգ սպիտակեղեն, 350 հազար կտոր զինվորական համազգեստ, 346 հազար շինել: Կոշիկի ֆաբրիկաները տարեկան արտադրում էին մինչև 800 հազար զուգ կոշիկ: Ռազմաճակատ է ուղարկվել 210 հազար ծանրոց:

Պատերազմի ժամանակ աշխատանքային արիություն հիասքանչ օրինակ տվեցին հանրապետության գյուղի աշխատավորները, խորհրդային տնտեսությունների բանվորներն ու ինժեներատեխնիկական անձնակազմը: Ռազմաճակատ մեկնածների փոխարեն դաշտային աշխատանքի ելան կանայք, պատանիներն ու ծերերը: Նրանք քուն ու դադար չունեին, աշխատում էին հայրերի օրինակով, օգնում ռազմաճակատում հաղթանակի կոփմանը: Գյուղի աշխատավորները «Հայաստանի կոլխոզնիկ» տանկային շարասյան համար իրենց խնայողություններից նվիրաբերեցին հարյուր միլիոնավոր ռուբլիներ և արժանացան Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի շնորհակալությանը: Հայաստանը պաշտպանության ֆոնդ է մուծել շուրջ 200 միլիոն ռուբլի, իսկ կարմիր բանակի ֆոնդին՝ 86 մլն ռուբլի: Այո՛, ամեն մի պատերազմում հաղթանակը ամենից առաջ պայմանավորված է ժողովրդական զանգվածների գիտակցությամբ և համոզմամբ: Գյուղացիությունը պատերազմի ծանր օրերին անգամ ընդարձակեց ցանքատարածությունը, բարձրացրեց տեխնիկական կուլտուրաների բերքատվությունն ու անասունների մթերատվությունը: Մրցում էին բոլորը: Հեշտ ու դյուրին չէր նման պայմաններում հանրապետությունը սեփական հացով և սննդամթերքով ապահովելը: Բայց գյուղացիությունը իր քրտնաթոր աշխատանքով հասավ դրան:

Մեծ է թիկունքում աշխատող հայ մտավորականության՝ գիտնականների, գրողների, նկարիչների, արվեստի բնագավառի մյուս գործիչների ավանդը հայրենիքի պաշտպանության գործում: Նրանք իրենց ստեղծագործական միտքն ու եռանդը նվիրաբերեցին արտագրության կատարելագործմանն ու ռադմական տնտեսության զարգացմանը, ռացիոնալիզատորական գյուտարարական աշխատանքի ծավալմանը: Աշխարհահռչակ աստղաֆիզիկոս, այն ժամանակ 35-ամյա ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը գիտությունը հարըստացրեց նոր հայտնագործություններով, ստեղծեց պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որի համար արժանացավ Պետական մրցանակի: Այդ գյուտը կիրառական նշանակություն ստացավ երկրի պաշտպանության գործում:

1943 թ. նոյեմբերին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Գիտությունների ազգային ակադեմիայի ակունքները ձգվում են դեպի դարերի խորքը, որի ճանապարհին շողջողում են Մեծն Մեսրոպ Մաշտոցի հանճարով տակավին V դարում ստեղծված հայերեն գրերը՝ հայ ժողովրդի գոյատևման հզոր ուժի աղբյուրը: Եվ այսպես դարերը հաջորդեցին միմյանց: Հանդես եկան հայ ականավոր գիտնականներ, որոնք հռչակվեցին պատմության, փիլիսոփայության, բնագիտության, աստղաբաշխության, բժշկության, մաթեմատիկայի, գրականության և մարդկային մտքի այլևայլ բնագավառներին վերաբերող իրենց ինքնատիպ ու յուրօրինակ մեծարժեք ստեղծագործություններով: Այսուհանդերձ, նախորդ դարերում պետականությունը կորցրած հայ ժողովրդին երբեք չհաջողվեց մայր հայրենիքում համախմբել իր տաղանդաշատ զավակներին՝ գիտնականներին և նրանց ուժերը լիովին ի սպաս դնել հարազատ ժողովրդի զարգացմանն ու բարգավաճմանը: Միայն փոթորկահույզ XX դարը, իր քաղաքական ցնցումներով, վերելքներով և վայրէջքներով հանդերձ, հնարավորություն տվեց հայ ժողովրդին մայր հայրենիքում վերականգնելու իր կորցրած պետականությունը, ընթանալու քաղաքակրթության ճանապարհով: Հիմնադրվեց երևանի պե-

տական համալսարանը, ծնունդ առան ուսումնական և գիտահետազոտական, կիրառական ինստիտուտները, զարգացավ հայագիտությունը: Այս ամենը հնարավորություն ընձեռեց 1935-ին Երևանում կազմակերպելու խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը: Գիտահետազոտական հիմնարկները միավորվեցին ավանդական հայագիտական օջախների հետ: Արմֆանը նախապատերազմյան տարիներին դարձավ հանրապետության գիտական մտքի կենտրոն:

Հայաստանում գիտության զարգացման նոր արդյունավետ փուլը նշանավորվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումով: Հայաստանի կառավարությունը իր որոշմամբ Հայրենական մեծ պատերազմի ահեղ օրերին, 1943 թ. նոյեմբերի 10-ին, հռչակեց հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնադրումը: Դա հիրավի հիշարժան իրադարձություն էր, գիտության զարգացման, հայ գիտնականների նկատմամբ հոգատարության արգասիք: Իրականացան հայ ժողովրդի բազում սերունդների Երազանքները հայկական ակադեմիա ստեղծելու մասին:

Հայաստանի կառավարության որոշման մեջ, որը նոյեմբերի 12-ին հրապարակվել է հանրապետական մամուլում, ասված է. «Հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությունը գիտական միասնական ղեկավար կենտրոնում համախմբելու նպատակով և գիտական աշխատանքի հետագա էլ ավելի նպատակասլաց զարգացման համար ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի բազայի վրա Երևան քաղաքում կազմակերպել Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա»:

Սահմանվեց ակադեմիայի հիմնադիր կազմը՝ 23 իսկական անդամ՝ ակադեմիկոս: Առաջադրվեցին ակադեմիկոսների թեկնածությունները, որոնք վերջնականապես հաստատվեցին ժողկոմխորհի կողմից: Նոյեմբերի 26-ին մամուլում հրապարակվեց ԳԱ հիմնադիր անդամների ցուցակը: Նրանց մեջ էին հայ ականավոր գիտնականներ՝ աստղագետ Վիկտոր

Համբարձումյանը, ինչպես նաև ութսունվեցամյա ականավոր հայագետ Ստեփան Մալխասյանցը: Առաջին ակադեմիկոսների միջին տարիքը 53 էր: Հովսեփ Օրբելին 56 տարեկան էր: Նրանք բոլորն էլ ճանաչում գտած գիտնականներ էին: Արմֆանում այդ ժամանակ աշխատում էին ԽՍՀՄ ԳԱ 5 անդամ և թղթակից անդամ, գիտության 90 դոկտոր և պրոֆեսոր: ՀՀ ԳԱԱ հիմնադիր անդամներ էին՝ Մանուկ Աբեղյանը, Արտեմ Ալիխանյանը, Աբրահամ Ալիխանովը, Հրաչյա Աճառյանը, Հրաչյա Բունիաթյանը, Վարդան Գուլբանյանը, Իվան (Հովհաննես) Նդիրազարովը, Ալեքսանդր Թամամշյանը (Թամամշեր), Միքայել Թումանյանը, Վաչե Իսագուլյանը, Ավետիք Իսահակյանը, Սահակ Կարապետյանը, Խաչատուր Կոշտոյանցը, Ալեքսանդր Հակոբյանը, Վիկտոր Համբարձումյանը, Լևոն Հովհաննիսյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփան Մալխասյանցը, Հակոբ Մանանդյանը, Կոստանդին Պաֆենհոլցը, Արսեն Տերտերյանը, Հովսեփ և Լևոն Օրբելիները:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ Վիկտոր Համբարձումյանը և Վարդան Գուլբանյանը:

1943 թ. նոյեմբերի 29-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքում բացվեց ԳԱԱ անդրանիկ ընդհանուր ժողովը: Փայլուն ղեկուցումով հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ Հովսեփ Օրբելին:

—Ավելի քան երկու և կես հազար տարի առաջ,—ասաց նա,—հայկական հողի վրա ստեղծվում էին կուլտուրական մեծ արժեքներ: Մեկ և կես հազար տարի առաջ ծնունդ առավ հայկական գիրը, և մեր հին շատ գիտնականներ ու դրողներ հոյակապ երկեր ստեղծեցին հայ ժողովրդի լեզվով, ժողովուրդ, որն այսօր հանդիսավորապես բացում է իր Գիտությունների ակադեմիան:

Հաստատվեց ԳԱ կանոնադրությունը: Ակադեմիայի կազմում ստեղծվեցին հիմնարար-կիրառական և հումանիտար գիտությունների բաժանմունքները, որոնց համակարգում մտան ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, երկրաբանության և հանքաբանության, զենետիկայի և բույսերի, կենդանաբանու-

թյան, ֆիզիոլոգիայի, խաղողագործության և գինեգործության, անասնապահության, դաշտավարության, ջրային տրնտեսության, պատմության, գրականության ինստիտուտները, պատմության թանգարանը:

Մեծ հայրենականին մասնակցել է գիտությունների ակադեմիայի շուրջ 300 աշխատող: Նրանց մի մասը 1941—1945 թթ. աշխատել են ակադեմիայում և այնտեղից են ռազմաճակատ մեկնել, իսկ մյուս մասը հետպատերազմյան շրջանում է աշխատանքի անցել ակադեմիայում: Անմոռանալի են նրանց մարտական ծառայությունները: Պատերազմի բովով են անցել վաստակաշատ գիտնականներ, ակադեմիկոսներ Հրանտ Ադոնցը, Գուրգեն Բաբաջանյանը, Բաբկեն Առաքելյանը, Նագուշ Հարությունյանը, Էդուարդ Զրբաշյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Վահան Ղազարյանը, Սարգիս Վարդանյանը, Վաչե Նալբանդյանը, Վռամ Դովլաթյանը, Ռաֆայել Ալեքսանդրյանը, Ռաֆայել Ստամբուլցյանը, գիտության բազմաթիվ դոկտորներ և թեկնածուներ:

Ֆաշիզմի դեմ տարած համաշխարհային պատմական հաղթանակի ելքը վճռվում էր և՛ ռազմաճակատում, և՛ թիկունքում: Թիկունքի անսասանությունը, ամենից առաջ ռազմական էկոնոմիկայի արարումները, հնարավորություն տվեցին չորս տարի շարունակ ռազմաճակատն անխափան ապահովելու ռազմական տեխնիկայով, հանդերձանքով և պարենով: Պատերազմի բոցերում քայլ առ քայլ նվաճվում էր բաղձալի հաղթանակը, իսկ թիկունքում՝ ամրապնդվում երկրի քաղաքական, տնտեսական և ռազմական հզորությունը: Պատերազմը խիզախության, արիության և մասսայական հերոսության դպրոց էր: Սերունդները ականածանքով են հիշում և հրախտագիտությամբ փառաբանում թիկունքի մարդկանց աշխատանքային սիրանքները. նրանց, որոնք, հաղթահարելով ծանր դժվարությունները, աշխատանքը կազմակերպեցին ռազմական պահանջներին համապատասխան, հստակ կազմակերպված էվակուացրին հազարավոր մարդկանց, հարյուրավոր գործարաններ, կառուցեցին տանկեր և ինքնաթիռներ, պողպատ ձուլեցին արկերի համար:

Հայաստանը օգնում էր աղատագրված քաղաքներին, բնակավայրերին՝ արագորեն ապաքինվելու: Հանրապետության աշխատավորները Ուկրաինայի, Լենինգրադի, Ստալինգրադի, Օդեսայի և ավերված այլ քաղաքների ու շրջանների վերականգնման ֆոնդին նվիրաբերեցին մեծ քանակությամբ դրամ: Դոնբասի ձեռնարկություններին ուղարկեցին շուրջ 9.500 մեքենաներ, գործիքներ և այլ մասեր:

Մարտնչող ժողովրդին ու ռազմիկներին հայրենասիրական նոր ստեղծագործություններով ոգեշնչեցին հայ գրողներն ու արվեստագետները: Ավետիք Իսահակյանը իր նոր ստեղծագործությունների համար արժանացավ Պետական մրցանակի, Դերենիկ Դեմիրճյանը ստեղծեց «Վարդանանքը», Ստեփան Զորյանը՝ «Պապ թագավորը» պատմավեպերը: Իրենց քաղաքացիական կորուվաշունչ քնարը նոր ուժով հնչեցրին Նաիրի Զարյանը, Հովհաննես Շիրազը, Գեղամ Սարյանը և ուրիշներ: Ռազմաճակատում ծնվեցին Հրաչյա Քոչարի շատ ստեղծագործություններ, Սերո Խանզադյանի ռազմաճակատային օրագրությունները ու «Մեր գնդի մարդիկ» վեպը, Համո Սահյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Արսեն Հովհաննիսյանի, Գուրգեն Բորյանի, Արշալույս Սարոյանի և ուրիշների մարտաշունչ բանաստեղծությունները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հզոր ուժով դրսևորվեց Մարտիրոս Սարյանի նկարչական անզուգական արվեստը: Արվեստի ականավոր գործիչներ Վաղարշ Վաղարշյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վահրամ Փափազյանը, Գուրգեն Զանիբեկյանը, Վարդան Աճեմյանը, Դավիթ Մալյանը, Հայկանուշ Դանիելյանը, Ավետ Ավետիսյանը, Շարա Տալյանը, Արուս Ոսկանյանը, Յուլիա Ամբրիկյանը, Արմեն Գուլակյանը և տասնյակ ուրիշներ պարբերաբար ելույթներ էին ունենում հոսպիտալներում և զորամասերում: Գրողների, նկարիչների ու արտիստների խմբերը մեկնում էին ռազմաճակատի առաջավոր գիծ, իրենց արվեստով խանդավառում հայրենիքի պաշտպաններին:

Մեծ Հայրենականում Հայաստանի աշխատավորները ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին երկրի պաշտպանու-

Թյան ֆոնդի ստեղծմանը: Թիկունքայինների նյութական միջոցներով կառուցված «Հայաստանի կոլխոզնիկ» տանկային շարասյունը, «Հայաստանի կոմերիտական» էսկադրիլիան և «Հայաստան» զրահագնացքը ռազմաճակատ մեկնեցին՝ խորհրդանշելով Թիկունքի մարդկանց հայրենանվեր գործերը:

Հայաստանը դարձավ ռազմաճակատի զինանոցներից մեկը: Անմոռաց են Հայաստանի Թիկունքի մարդկանց աշխատանքային սխրանքները:

ՄԱՐԾԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ հայկական ռազմական հանճարը երբեք այնպես չի փայլել, ինչպես մեծ Հայրենականում:

Ռազմաճակատի տարրեր հատվածներում զորքերի մարտական գործողությունները գլխավորել են 60 հայ գեներալներ: Ամբողջ ուժով նրանք զրսևորեցին հայ ռազմական արվեստի ուժն ու հնարամտությունը: Հայ զորապետների համաստեղության գրոշակակիրը Հովհաննես Բաղրամյանն է:

Հայրենական մեծ պատերազմի պատմությունը առանց մարշալ Հովհաննես Բաղրամյանի կենսապատման անհնար է պատկերացնել, քանզի նա և՛ պատմություն է ստեղծել, և՛ նրա հմուտ պատմաբանը դարձել:

Մարշալ Բաղրամյանը ազգային և համամարդկային, ինտերնացիոնալիստականի խորհրդանիշ է: Մեծ հաղթանակի տոներ միաժամանակ հիշողության օր է: Հիշում ենք Մարշալին և փառք շնչում նրա պատվին:

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը կարող էր և լիովին իրավունք ուներ ցայսօր ապրելու, իր իմաստուն խորհուրդներով զորավիգ դառնալու անկախության ուղին բռնած Հայաստանի պետականության գործընթացին, ազգային բանակի ստեղծմանը: Բայց, ավա՛ղ, նրա նվիրական կյանքի

թիւը կտրվեց տասներեք տարի առաջ, 1982-ին՝ անկատար թողնելով շատ հրազանքներ: Նա ղինվորին հատուկ անթերի կատարեց իր պարտքը և նոր հեռացավ կյանքից:

Տաղանդաշատ զորավարի ռազմավարական արվեստն ու անձնական սխրանքները, որոնց առհավատչյա՛ն կրկնակի հերոսի կոչումն ու երեք տասնյակ մարտական շքանշաններն էին, հայտնի են և վերապատմելու հարկ չկա:

Մեծ հաղթանակի տոնը հիշելու օր է, հիշում ենք մեծ զորավարին՝ ի նշան երախտագիտության և զիտենք, որ նրա բարի համբավը երբեք չի խամրի: Հիշում ենք մեծ Հային, Մարդ-քաղաքացուն, սրտամոտ բարեկամին:

Մարշալ Բաղրամյանի կյանքն անբաժանելի է հայ ժողովրդի XX դարի պատմությունից: Կինելով ժողովրդի արժանավոր զավակ՝ անձնվիրաբար ծառայել է ազգին, ամմոռաց և խորապատկեր էջեր գրել Հայաստանի ռազմական շինարարության, ազգային բանակի կազմավորման, Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական զավթիչների ջախջախման, պատմական մեծ հաղթանակի տարեգրության մեջ: Հայոց հինավուրց Չարդախլու գյուղը, որի զավակն էր մարշալ Հովհաննես Բաղրամյանը, աշխարհին հայտնի է ոչ միայն իր աշխատասեր և հմուտ երկրագործներով, մտավորականությամբ, այլ նաև քաջակորով ռազմիկներով՝ բարձրաստիճան սպաներով ու գեներալներով, մարշալներով:

Հովհաննես Բաղրամյանը պատանեկան տարիներին ընթանալով իր հոր՝ երկաթուղային վարպետ Քրիստափորի (Խաչատուրի) ճանապարհով, ուզում էր երկաթուղային դառնալ, բայց ավարտելով Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանը՝ 1915-ի նոյեմբերին, իբրև կամավոր շարքային ղինվոր, ծառայության է անցնում Կովկասյան 2-րդ սահմանապահ գնդում, որը գործում էր Կովկասյան ռազմաճակատում, ակտիվորեն մասնակցում հայ ժողովրդի գոյամարտերին՝ խորապես ապրելով արևմտահայերի վիշտն ու տառապանքը: Հիշենք, որ տակավին 1917-ին ռուսական բանակի հիմքի վրա թուրքական ռազմաճակատում ստեղծվել

էր հայկական վեց գունդ, որը գտնվում էր Հայկական կորպուսի կազմում, և հրամանատարն էր Թովմաս Նազարբեկովը (Նազարբեկյանը): Սպայակույտի պետը գեներալ Վիշինսկին էր: Զորամիավորման հատուկ կոմիսար է նշանակվում Դրաստամատ Կանայանը (Դրոն), տեղակալ՝ շարդախվեցի բժիշկ Սարգիս Մանասյանը: Շուտով հայկական զորամիավորման մեջ է մտնում գեներալ Անդրանիկի զորախումբը: Հրամանատարության ուղադրությանն արժանացած հայրենասեր պատանի Հովհաննեսը 1917-ի հունիսին, ավարտելով պրոպորշչիկների դպրոցը, նորից մեկնում է ռազմաճակատ, ծառայում հայկական 2-րդ հրաձգային գնդում: Նա հայկական առանձին հեծյալ գնդի կազմում մասնակցում է Սարիղամիշի, Կարսի և ռազմաճակատի այլ հատվածներում թուրքական զավթիչների դեմ մղված մարտերին: Հենց այդ ժամանակ էլ մարտական գործողությունների ընթացքում նա հանդիպում է զորավար Անդրանիկին, որի անունը, իբրև լեգենդ, թնդում էր ամենուրեք: Հովհաննես Բաղրամյանը ակտիվորեն մասնակցել է Սարգարապատի հերոսական ճակատամարտին: Նա հայկական առաջին և երկրորդ հանրապետությունների ազգային բանակների կառուցողներից է: Նրա կյանքը, ինչպես միշտ, այսօր ևս պետք է օրինակ ծառայի հայ ռազմիկներին, Արցախի և Հայաստանի սահմանների պաշտպանական կռիվներում մարտնչող ազատամարտիկներին, նոր կազմավորվող հայկական բանակի ռազմիկներին: Այժմ, քան երբեք, հրատապ նշանակություն է ստանում հայ ժողովրդի բոլոր ժամանակների՝ Տիգրան Մեծից մինչև Ավարայր՝ Վարդան Մամիկոնյան, Դավիթ-Բեկից մինչև զորավար Անդրանիկ ու մարշալ Բաղրամյան... ռազմավարական փորձի ուսումնասիրությունը, մարտական ավանդների յուրացումը: Ամեն մի սերունդ պարտավոր է գերազանցել իր նախորդներին, բայց նրանցից չկտրելով իր հոգևոր կապը: Իսկ նա, ով փորձում է սեպ խրել սերունդների հաջորդականության միջև, ազգադավ գործ է կատարում ու ջուր լցնում թշնամու

ջրաղացին: Նա, ով ասում է՝ հայերը միշտ էլ նշանավոր գեներալներ են տվել, բայց զինվորներ չեն ունեցել, ճիշտ չէ: Գեներալ, ինչպես և զինվոր, չեն ծնվում: Զինվորը մասնագիտություն է: Մարդ կատարելագործում, հարստացնում է իր ռազմական գիտելիքները, յուրացնում մարտավարական արվեստը, տարիների քրտնաջան աշխատանքով հասնում գեներալի կոչման: Հայրենական մեծ պատերազմի տարիներին գեներալի կոչման արժանացած հայորդիների մեծ մասը՝ Հովհաննես Բաղրամյան, Համադասպ Բաբաջանյան, Սարգիս Մարտիրոսյան, Բագրատ Առուշանյան, Հայկ Մարտիրոսյան, Նվեր Սաֆարյան, Նիկոլայ Հովհաննիսյան, Աշոտ Սարգսյան, Ասբանազ Կարապետյան, Բենիամին Գալստյան, Սերգեյ Միանսարյան (Միանսարով), Միքայել Մուրադյան և ուրիշներ, իրենց զինվորական մկրտությունն ստացել են հայկական զորամիավորումներում:

Հովհաննես Բաղրամյանը և հայկական լեռնահրաձգային 76-րդ՝ հետագայում 51-րդ զվարդիական դիվիզիայի քսանական թվականների կոմիսար-քաղբաժնի պետ Հովհաննես Վարդանյանը՝ Բանվոր Իվանը, մարտական հին ընկերներ էին, 1925-ին Գեորգի Ժուկովի, Կոստանդին Ռոկոսսովսկու և այլոց հետ սովորել էին հեծելազորի հրամանատարների կենսինգրադի որակավորման դասընթացներում: Հենց այստեղ էլ ծնունդ էր առել և կոփվել Հովհաննես Բաղրամյանի և Գեորգի Ժուկովի մարտական բարեկամությունը:

Հովհաննես Բաղրամյանի անունը, ինչպես շատ շատերի, այնպես էլ իմ սրտի մեջ ջերմ արմատներ նետեց մեծ Հայրենականի առաջին իսկ օրերից: Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով ստեղծված «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյան ստեղծման լուրը ավելի ոգևորիչ էր: Բաղրամյանը դարձավ ինչպես միլիոնների, այնպես էլ իմ պաշտելի զորապետերից մեկը: Թեև ռազմաճակատում ֆաշիզմի դեմ մարտնչում էի մեկ այլ լեգենդար գեներալ Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ, հավասարապես գերված էի և Բաղրամյանի ռազմական փառքով, որը ասես հեռվից հեռու արիու-

Թյուն էր ներշնչում բոլորիս: Դե ո՞վ չի հպարտացել Բաղ-
րամյանով: Մեծ Հայրենականի այն հրաշունչ օրերին զին-
վորներին պատմում էի նրա սխրանքները, կարդում ընկե-
րոջս՝ բանաստեղծ Հովհաննես Շիրազի հայրենաշունչ ստեղծա-
գործությունները: Մինչև այժմ էլ ուզմաճակատային թղթե-
րիս մեջ պահպանվել են գեներալ Հովհաննես Բաղրամյանին
Շիրազի նվիրած ձոներգերը: Ահա և դրանցից մեկը.

Շատ ես, ազիզ, քո ճերմակ ձին
Արազն ի վեր լողացրել,
Շատ ես հեծնել քո ճերմակ ձին
Ու սուրացել սարերն ի վեր,
Ծառս հանելով քո ճերմակ ձին
Ինչպես Մասիսն իմ ալեհեր:
Բայց ե՞րբ պիտի ճերմակ ձիով
Մեկ էլ սուրաս Մասիսն ի վեր,
Որ հովանա Մասյաց ձյունով
Այրվող սիրտս
Ո՞վ անվեհեր...

Հիշելու օր է, մարշալի նկատմամբ տածվող հարգանքի
ու մեծարման պահ: Երբ ասում ենք Հովհաննես Բաղրամյան,
մտովի հիշում ենք զինվորից մինչև մարշալ նրա անցած
ուղին, հիշում ենք մեծ Հայրենականի երկար ու ձիգ, վառողի
ծխով հագեցված օրերի պատերազմի հրե ցոլքերում արիա-
բար մարտնչած շուրջ 600 հազար հայ ռազմիկների, 60
գեներալների, 108 հայ և հայաստանցի հերոսների սխրանք-
ները: Երբ ասում ենք Հովհաննես Բաղրամյան, հիշում ենք
բոլոր այն ռազմիկներին, որոնք հանուն հայրենիքի զոհվել
են, հիշում ենք նրանց և փա՛ռք շնչում: Երբ ասում ենք
Հովհաննես Բաղրամյան, հիշում ենք բարեհամբույր, բարյա-
ցակամ, հզոր ու արի հայորդուն, հազարավոր մարդկանց
կյանքը կրակի միջից փրկած հրամանատարին, հիշում ենք
մեր կենսագրություներ, հիշում ենք... և փա՛ռք շնչում...

Մարշալի զինվորական տաղանդը նոր ուժով փայլա-
տակեց 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում և

հետպատերազմյան տարիներին, երբ նա ղեկավարում էր զինվորական բարձր զորամիավորումներ: Բաղրամյանն իր մնացուց տեղն է գրավել մեծ զորավարների համաստեղության մեջ: Եվ երբ ասում ենք Հովհաննես Բաղրամյան, ցասումով հիշում ենք նաև, թե ինչպես են աղբյուրաբանական հրոսակները հրի ու սրի մատենել նրա ծննդավայրը, ոչնչացրել մարշալի տուն-թանգարանը, պղծել բրոնզե կիսանդրին, բռնագաղթեցրել չարդախվեցիներին, բայց գիտենք նաև, որ ապրում և մաքառում են Հովհաննես Բաղրամյանը և նրա քաջարի համագյուղացիները, և կգա հատուցման պահը, և մոխիրներից, իբրև փյունիկ, վեր կհառնի Չարդախուն:

Ինչպես յուրաքանչյուր մեծ անհատականություն, այնպես էլ Բաղրամյանը, օժտված էր հանրագիտական գիտելիքներով: Իբրև ռազմական գործի ականավոր տեսաբան ու պատմաբան, նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները լայն ու բազմազան էին, պատերազմական գործողությունների ռազմական արվեստի և պատմության, առաջնահերթ հիմնախնդիրների, հայ ժողովրդի պատմական ճակատագրի, հայկական հարցի արդարացի լուծման հոգսերի մասին նրա աշխատությունները սկզբնաղբյուրային նշանակություն ունեն: Հնարավոր չէ գրել Երկրորդ համաշխարհային պատերազմի իսկական պատմությունը, առանց մարշալ Բաղրամյանի աշխատությունների, առանց հաշվի առնելու այն սկզբունքային ուղղումներն ու ճշտումները, որ նա կատարել է Կուրսկի ճակատամարտի, «Բագրատիոն» գործողության և ռազմավարական այլ պլանների մեջ:

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը թողել է գրական հարուստ ժառանգություն: Նրա աշխատությունները հրատարակվել են Մոսկվայում, Բեռլինում, Կիևում, Ռիգայում, Վիլնյուսում, Բուդապեշտում, Բուխարեստում և այլուր: Հայաստանում տպագրվել են նրա «Այսպես է սկսվել պատերազմը», «Հերոս քաղաք Դնեպրի վրա», «Այսպես մենք հասանք հաղթանակի», «Իմ հիշողությունները», «Մեծ ժողովրդի զավակները» և այլ գրքեր: Լույս է տեսել «Մարշալ

Բաղրամյան» պատկերադարձ ակբումը, որը աչքի է ընկնում նկարների բարձրաճաշակ ընտրությամբ, անթերի տպագրությամբ: Մարշալը ղեկավարել է ռազմական գիտության, արվեստի, պատմության բազմապլան հիմնարար աշխատությունների հեղինակային կոլեկտիվներ, խմբագրել մենագրություններ, բազմահատորյակներ: Նա, ինչպես և Գեորգի Ժուկովը, ռազմական մեմուարային գրականության ժանրը հասցրեց մի նոր աստիճանի: Նրա գրական խիղճը մաքուր ու վճիտ է, ինչպես իր հմայիչ նկարագիրը:

Ուզում ենք նշել Հովհաննես Բաղրամյանի գործունեության մի կողմը ևս: Նրա ուշադրության կենտրոնում են եղել հայ ժողովրդի ազատագրական պայքարի հիմնահարցերը: Իր գրական հետադոտություններում անդրադարձել է օտարերկրյա զավթիչների դեմ հայ ժողովրդի հերոսական մաքառումներին, սթափ գնահատել պատմական իրադարձությունները, մերկացրել թուրքական կառավարող շրջանների բիրտ և բարբարոսական գործելակերպը, դատապարտել նրանց՝ հայերի ցեղասպանության կազմակերպման համար, ըստ արժանվույժի գնահատել ժողովրդական հերոս զորավար, մեծ հայդուկապետ Անդրանիկի պատմական ծառայությունները:

Հովհաննես Բաղրամյանը բազում թելերով կապված էր Հայաստան երկրի և հայկական սփյուռքի հետ, հաճախ է հանդիպումներ ունեցել հայրենակիցների հետ: Այդ այցելությունների ընթացքում էլ, որպես անմար հուշ, ծառեր է տնկել Երևանի Հաղթանակի զբոսայգում, էրեբունի թանգարանի մերձակա բարձունքներում, էջմիածնում, Իջևանում, Նոյեմբերյանում, Տավուշում և այլուր:

Արդ, հիշում ենք նաև, թե Երկրորդ աշխարհամարտի օրերին սփյուռքահայերը ինչպիսի ոգևորությամբ էին հետևում հայ ռազմիկների մարտական գործողություններին, ինչպես էին սիրում գեներալ Բաղրամյանին: Այդ սիրո և նվիրվածության առհավատչյան էին և պատերազմի ահեղ օրերին հայկական համայնքներում ծավալված ակտիվ գործողություն-

ները, «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների կառուցման համար միջոցների հավաքումը: Ստեղծված տանկային առաջին շարասյուները 1944-ի ձմռանը առաքվեցին ռազմաճակատ: Թեհրանի հայկական համայնքը, հետևելով հայոց ավանդույթներին, միաժամանակ մի հատուկ սուր (թուր) պատրաստեց և նվեր ուղարկեց Առաջին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանին: Այն մեծ խորհուրդ ուներ:

1944 թ. դեկտեմբերի 23-ին Արտաքին գործերի նախարարի տեղակալ Ս. Քավթառաձեն մի գրությամբ կարմիր բանակի գլխավոր շտաբին է հանձնել Թեհրանի հայ համայնքի ողջույնի ուղերձը և պատվո սուրը՝ Բաղրամյանին տալու համար: Բանակի գեներալ Անտոնովը այդ գրության վրա մակագրել է. «Ընկ. Օվչենիկովին՝ ապահովել սրի հանձնումը ընկեր Բաղրամյանին, կցել այդ նամակի պատճենը»: Թեհրանահայերի նվերը մարշալին հանձնվեց ռազմաճակատում՝ Քյոնիգսբերգի ազատագրության համար ծավալված ահեղ մարտերի օրերին: Արխիվային վավերագրերը պատմում են այդ իրադարձությունները՝ «Սասունցի Դավիթ» տանկային առաջին շարասյունը մարտադաշտ ընդունելու, «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուն ստեղծելու մասին: Գեներալ Բաղրամյանին ընծայած սուրը հիշեցնում էր «Սասնա ծռեր» հայկական ժողովրդական վեպի հերոսների զենքը՝ «Թուր կեծակին», որով շեշտվում էր երկաթն ու պողպատը, Դավիթը կտրում է 20 գոմշի կաշին, նույնքան ջրադացաքարը, երկու կես անում Մսրա Մելիքին: Թեհրանահայերի պատկերացմամբ այդ սուրը կախարդական ուժով պիտի հովանի լիներ գեներալին և մասնակցեր մեծ հաղթանակի կոփմանը:

Այդպես էլ եղավ:

Հիշենք, որ կարմիր բանակում 1940 թվականից գեներալներին հանձնվում էին շքերթային թրեր, որոնք 1949-ին փոխարինվեցին նրանիկներով՝ կարճ սուսերով: 1945-ի հունիսի 24-ին բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանը

Մոսկվայում, Կարմիր հրապարակում, անմոռաց հաղթանակի
զորահանգեսին հպարտ ու հատու քայլքով, հայրենակից-
ների ընծայած պատմական սուրբ կապած, անցավ Մերձ-
բալթյան ռազմաճակատի հավաքական զորամիավորումների
առջևից:

Անցան տարիներ... Մարշալ Հովհաննես Բաղրամյանը
1967 թ. մայիսի 7-ին այդ սուրբ, իբրև սուրբ մասունք, պահ
է տվել Հայաստանի հեղափոխության թանգարանին (այժմ
միացված է պատմության թանգարանին) և պահվում է 17025
համարի տակ: Այն պատրաստված է մաքուր պողպատյա
շեղբից, նիկելազօծված է, փայլատակում է, ունի կողքից
կախելու համար պատյան, որը արծաթից է: Շեղբը երախա-
կալից բաժանված է խաչաձև ոսկե կոճակով, ագուցող օղակ-
ները նույնպես ոսկուց են: Արծաթե պատյանին պատկերված
են ձիթենու ճյուղ, ԽՍՀՄ-ի պետական գերբը, հայերեն և ռու-
սերեն լեզուներով գրված են՝ «Բանակի գեներալ, Սովետա-
կան Միության հերոս Յ. Ք. Բաղրամյանին՝ Թեհրան քաղաքի
հայ համայնքից 2.11.1944»:

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը, պատմական այդ
սուրբ պահ տալով թանգարանին, գրել է՝ «Մեծ ուրախու-
թյամբ թանգարանին եմ նվիրում հավերժ պահպանության
այն սուրբ, որը Հայրենական մեծ պատերազմի տարիներին
ինձ են ուղարկել իբրև նվեր մեր եղբայրները, — Թեհրան
քաղաքի հայերը:

Հովհաննես Բաղրամյան

7 մայիսի 1967 թ.»:

Գրության ձախ մասում նույն պահին իր ինքնագիրն է
թողել Անաստաս Միկոյանը:

... Հիշողության օր է: Հիշում ենք մեծ զորավարին՝ մար-
շալ Հովհաննես Բաղրամյանին: Նրա անմոռաց հիշատակը
պարտավորեցնում է խնամքով հավաքել այն բոլոր նյութերն
ու իրերը, որոնք կապված են նրա կենսապատման հետ, և
իբրև մասունք պահպանել և փոխանցել սերունդներին: Այդ
ուղղությամբ օգտակար աշխատանք են կատարում պատե-
րազմի և զինված ուժերի վետերանները, մտավորականու-

թյունը, մարշալի հարազատներն ու մարտական ընկերները: Ստեղծված է «Մարշալ Հովհաննես Բաղրամյան հիմնադրամը», որի նախագահն է գեներալ Իլյա Բաղրամյանը՝ մարշալի զարմիկը: Ծրագրված է ֆինանսական միջոցներ հավաքել Երևանում՝ իր անունը կրող պողոտայի վրա մարշալի հուշարձանը կանգնեցնելու և հուշաթանգարան կառուցելու համար: Ընթերցողից ներողություն եմ խնդրում նյութի ոգուց մի փոքր շեղվելու համար: Վերջին անգամ մարշալ Բաղրամյանին տեսա Մոսկվայում: Դա 1982-ի մարտի 20-ն էր: Հիվանդ էր, ղրուցեցինք..., ֆիզիկապես տկար և անուժ էր, հոգեպես՝ ընկճված և թախծոտ: Հաճախ էր մտաբերում Հայաստանը, Երևանը, իր մոտիկ և հեռավոր բարեկամներին: Նա փայփայում էր ապաքինվելու հույսը:

— Հենց որ առողջացա, պիտի գամ Երևան,— ասաց նա,— և ապրեմ իմ անունը կրող պողոտայի տներից մեկում...

Բայց նրա իղձը անկատար մնաց: Երկու օր անց նրան տեսա Մոսկվայի Ա. Ֆադեևի անվան գրողների տանը: Այդ օրը Մոսկվան հրաժեշտ էր տալիս Մարիետա Շահինյանին: Հուղարկավորության հանրապետական հանձնաժողովի կազմում էր նաև տողերիս հեղինակը: Սգո թափորը դեպի Վազանկովյան գերեզմանոց շարժվելուց առաջ եկավ և մարշալը, մոտեցավ բեմահարթակին, ուր դրված էր դագաղը, հանեց գլխարկը, դրեց դագաղի մոտ և ծնկաչոք համբուրեց հանգուցյալի ճակատը: Նկատեցի, որ մարշալը լաց էր լինում, այո՛, այո՛, շատ մահեր տեսած զորավարը լաց էր լինում, այն էլ՝ ինչպես՝:

Հետո նա ասաց.

— Այսօր մենք հրաժեշտ ենք տալիս հուշակավոր գրողին... Ասաց ու գնաց: Դրսում ցուրտ էր, սառը ցուրտ... Շատ չանցած, սեպտեմբերի 21-ին, մահը մեր շարքերից խլեց մեծ զորավարին, մեծ Հային:

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը իր հերոսական կյանքի օրինակով և թողած գրական ժառանգությամբ հավերժ

կապրի սերունդների սրտերում, որպես հայոց ռազմական փառքի խորհրդանիշ...

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ ԱՆԱՆՑ ԵՆ

